Բարեփոխումների խթանիչներ

Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՋՈՌԿ) ռազմավարություն մշակելու և ջրօգտագործման արդյունավետությունը բարձրացնելու ծեռնարկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ 5
ՋՈՒՀԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ 6
Ջուր և կայուն զարգացում 6
Հստակեցնելով ՋՈՒՀԿ-ի «համապարփակ» հասկացությունը 7
ՋՈՒՀԿ մեթոդի առավելությունները 7
Ջրի արդյունավետության դերը 10
ՋՈՒՀԿ-ն՝ որպես փոփոխությունների միջոց 12

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 14
ԽԹԱՆՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ 15
ԿՋՀԳ գործողությունների պլանի հիմնական կոչը 15
Նախնական ռազմավարության ընտրություն 16
Խնդիրների և գերակայությունների որոշում 17
ՔԱՅԼԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՎԵԼԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 19
ՋՈՒՀԿ փոփոխությունների շրջանակներ 19
Բնագավառների և մասշտաբների փոխկապացում 23

ԳՈՐԾԸՆԹԱՑ 27
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ 28
Պլանի և ռազմավարության տարբերությունը 28
Պատասխանատվությունների որոշում 28
Շահագրգիռ կողմերի մասնակցություն 30
Գիտելիքների բազայի ստեղծում 31
Ժամկետային շրջանակների ու հսկողության ցուցանիշների սահմանում 33
Մոնիթորինգ և գնահատում 34
ԲԱԽՎԵԼՈՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ 37
Աջակցությունների համակենտրոնացում 37
Ֆինանսական ռեսուրսների համակենտրոնացում 39
Մարդկային ռեսուրսների համակենտրոնացում 40

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 41
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ 42
Խուսափում անգործությունից 42
Բարեփոխումների իրականացում 43
Միջազգային փորձ 44

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ 45
Լրացում 1: Հոդված 26. ԿՋՀԳ իրագործման պլանից 46
Լրացում 2: Ռազմավարական արդյունքների շրջանակի օրինակ 47
Լրացում 3: Աջակցող գործակալությունների ցուցակ 49

ՆԱԽԱԲԱՆ

Կայուն զարգացման նպատակների հասնելու և ջրային ռեսուրսներին առնչվող խնդիրները լուծելու համար երկրները պետք է ներդրումներ կատարեն ջրամատակարարման ենթակառուցվածքներում՝ խողովակաշարեր անցկացնելու, ջրհորներ, մաքրման կայաններ, ոռոգման համակարգեր, հիդրոկայաններ, ջրամբարներ կառուցելու համար: Նրանք պետք է ներդրում կատարեն նաև ջրային ռեսուրսների առկա կառավարման համակարգը բարելավելու նպատակով: Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՋՌՀԿ) ռազմավարության մշակումը և արդյունավետ ջրօգտագործումը երաշխավորում են թե՛ երկրների առավելագույն օգուտը այս ներդրումներից, թե՛ դրանց արդարացի բաշխումը, թե՛ նվաճումների կայունությունը, որոնք չեն իրականացվի էկոհամակարգը վնասելու գնով:

Ջրային ռեսուրսները զարգացնելու և կառավարելու առավել կայուն մեթոդների անցնելը խթանելու նպատակով 2002թ.-ին Կայուն զարգացման համաշխարհային գագաթաժողովը (ԿԶՀԳ) հորդորեց բոլոր երկրներին մինչև 2005թ.-ի տարեվերջ մշակել ՋՌՀԿ-ի և արդյունավետ ջրօգտագործման ռազմավարություն[1]: Այսպիսի ռազմավարության նպատակն է աջակցել երկրներին, որպեսզի նրանք՝

- հասնեն կայուն զարգացման նպատակներին՝ չքավորության նվազեցում, սննդի անվտանգության ապահովում, տնտեսական արագ աճ, էկոհամակարգերի պահպանություն.
- լուծեն ջրային ռեսուրսներին առնչվող յուրահատուկ հիմնախնդիրներ, ինչպիսիք են ջրհեղեղները վերահսկելը, երաշտներից վնասը նվազեցնելը, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև մրցակցային ջրօգտագործման և ջրի անբավարարության կառավարումը:

Այս փաստաթուղթը չի տալիս ռազմավարություն մշակելու ցուցումներ, այլ ԿԶՀԳ-ի նպատակին հասնելու համար ապահովում է անհրաժեշտ գիտելիքներով՝ հնարավորություն ընձեռելով երկրներին ընտրելու ամենաընդունելի ճանապարհը: Ռազմավարությունը պետք է խթանի գործընթացը, և երբեք խոչընդոտ չհանդիսանա: Կարևորը առաջին քայլն է:

Առաջընթացի ճանապարհին

2003թ.-ի վերջին ԳՋՀ-ն իրականացրեց ոչ պաշտոնական մի ուսումնասիրություն՝ բացահայտելու, թե ինչպես են առաջադիմել երկրները ջրային ռեսուրսների ավելի կայուն և համապարփակ զարգացումն ու կառավարումն ապահովելու և մասնավորապես ԿԶՀԳ-ի[2] նպատակներն իրականացնելու ճանապարհին:

Նախնական արդյունքներով 108 ուսումնասիրված երկրների մոտ 10%-ը ներկայումս ունի համապարփակ մոտեցումների կիրառման առաջընթաց, 50%-ը որոշ քայլեր է ձեռնարկել այդ ուղղությամբ, սակայն դեռևս զգալի աշխատանք կա, մինչ երկրների 40%-ը դեռևս այդ գործընթացի սկզբնական փուլում է: Ուսումնասիրության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ որոշ երկրներ ամբողջովին գիտակցում են, թե որքանով է ՋՌՀԿ ռազմավարությունը օգնում խթանելու իրենց սոցիալ-տնտեսական զարգացումը, մինչդեռ մյուսները խոչընդոտների են բախվում սայլը տեղից շարժելիս:

Խթանելով ռազմավարական մոտեցումը

Գործընթացի շարժուն և փոփոխական բնույթը շեշտելու համար առավել ընդունելի է թվում «ռազմավարություն», քան «պլան» բառը: Գաղափարը ոչ թե ավանդական ջրային պլան ստեղծելն է՝ իրագործվող սահմանափակ փուլի շրջանակներում ներառելով ջրային առաջընթացի էությունը և կառավարման գործունեությունը, այլ շարժուն կառուցվածքի մշակումը, որը կխթանի ավելի ճիշտ պլանավորելու ու երկարաժամկետ որոշումներ կայացնելու գործընթացը: Մի շարք երկրներ գիտակցել են ՋՌՀԿ մեթոդի նշանակությունը և նույնիսկ մինչ ԿԶՀԳ-ին անցնելը ընտրել այդ ուղին: Նրանց փորձը օգտագործելով՝ հարկ է ճանապարհ հարթել այդ ուղով ընթացողների համար: Իսկ ավելի

[1] *Փաստորեն ըստ ԿԶՀԳ-ի՝ իրագործման պլանը «ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման և արդյունավետ ջրօգտագործման պլաններ»-ն են: Այնուամենայնիվ, թվում է՝ «ռազմավարություն» տերմինը, թերևս, առավել ճշգրիտ է արտահայտում ՋՌՀԿ-ի էությունը:*

[2] *Ամբողջ զեկույցին ծանոթանալու համար այցելե՛ք www.gwpforum.org:*

զարգացած երկրներին անհրաժեշտ են մի շարք առաջարկներ ռազմավարության կատարելագործման և իրականացման գործընթացում:

Ձեռք բերված փորձի կիրառում

Ներկայացվող դասերն ու առաջարկությունները մշակել են ԳՋՀ-ի համաշխարհային ցանցի գործընկերները, ինչպես նաև Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի՝ ՋՌՀԿ ռազմավարություններ մշակող ներկայացուցիչները մի շարք հատուկ սեմինարներ կազմակերպելու ընթացքում:

Ջրային ռեսուրսների զարգացման տարբեր ուղղություններ ներկայացնող շահագրգիռ կազմակերպություններ և մասնագետներ խորհրդատվություններով և գրախոսություններով նույնպես իրենց լուման են ներդրել սույն ձեռնարկը մշակելու գործում:

Ձեռնարկում օգտագործված են ԳՋՀ-ի տեխնիկական կոմիտեի նախնական փաստաթղթերին վերաբերող քաղվածքներ, գործի ուսումնասիրություններ և ՋՌՀԿ (Tool Box)-ից փոխառված միջոցներ: Նպատակը օգտագործողներին առկա ռեսուրսներին ծանոթացնելն ու պատասխանելն է այն հարցին, թե որտեղից կարելի է քաղել իրավիճակին համապատասխան լրացուցիչ տեղեկություններ:

Ընթերցողներին խորհուրդ է տրվում կարդալ նաև ԳՋՀ տեխնիկական կոմիտեի թիվ 4 և 10 տպագրությունները՝ «Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում», «...ՋՌՀԿ-ի և արդյունավետ ջրօգտագործման պլաններ մինչ 2005թ.» թեմաներով: Այդ տպագրությունները ներկայացնում են հայեցակարգային հիմունքներ ու ՋՌՀԿ գործընթացի առանձին տարրեր այն դեպքում, երբ սույն ձեռնարկը կենտրոնանում է այդպիսի գործընթացի առաջընթացին անհրաժեշտ առաջին գործնական քայլերին:

Ռոբերտո Լենտոն
տեխնիկական կոմիտեի նախագահ
Գլոբալ ջրային համագործակցություն

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՋՈՒՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

ՋՈՒՐԿ-ն ջրային ռեսուրսներն օգտագործելու և կայուն զարգացման գործընթացի վրա դրանց ազդեցությունը նվազեցնելու ճկուն գործիք է: Միևնույն ժամանակ ՋՈՒՐԿ-ն ինքնանպատակ չէ:
ՋՈՒՐԿ-ն ծառայում է ջրային ռեսուրսների կառավարման համակարգը բարելավելուն, խթանում է ճիշտ որոշումներ ընդունելը՝ արծագանքելով կարիքների և իրավիճակի փոփոխություններին: Միաժամանակ ձգտում է խուսափել մարդկային կորուստներից, գումար վատնելուց և որոշումներ ընդունելու արդյունքում բնական ռեսուրսներ սպառելուց. որոշումներ, որոնք կայացնելիս հաշվի չեն առնվում բնագավառային հետաքրքրությունների մեծ տարբերությունները: ՋՈՒՐԿ-ն հնարավորություններ է որոնում ապահովելու ջրային ռեսուրսների արդար կառավարում ու զարգացում՝ հաշվի առնելով կանանց և բնակչության չքավոր խավի շահերը: Նպատակը հավաստելն է, որ ջուրը օգտագործվում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակների առաջընթացի համար այնպես, որ չխախտվի կարևորագույն էկոհամակարգերի կայունությունը կամ ապագա սերունդների՝ իրենց ջրային կարիքները հոգալու կարողությունը:
Հաջորդ գլուխը համառոտ ծանոթություն է ՋՈՒՐԿ գաղափարին, դրա հիմնական սկզբունքներին, առավելություններին և ջրի կառավարման գործընթացին մասնակցությանը:

Ջուր և կայուն զարգացում

Ջուրը որոշիչ, բայց կայուն զարգացման մեջ հաճախ հետին պլան մղվող տարր է: Կլաուս Տոյֆերը՝ Միացյալ ազգերի էկոլոգիական ծրագրի (ՄԱԷԾ) գործադիր տնօրենը, ԿՋՀԳ-ի արդյունքները մեկնաբանելիս նշել է. «...ԿՋՀԳ-ն բացահայտել է, որ ջուրը ոչ միայն ամենակենսական պահանջ է, այլև կայուն զարգացման և չքավորության դեմ պայքարի կարևոր տարր: Ջուրը սերտորեն առնչվում է առողջությանը, գյուղատնտեսությանը, էներգիային և կենսաբազմազանությանը: Առանց ջրային ռեսուրսների զարգացման՝ հազարամյակի զարգացման նպատակներին հասնելը շատ դժվար կլինի, եթե ոչ անհնարին»:
Երկրները պետք է ի վիճակի լինեն մաքուր ջուր ապահովել՝ երեխաների մահացությունը նվազեցնելու, առողջապահական վիճակը և կանանց կարգավիճակը բարելավելու համար:
Ջուրը գյուղական միջավայրում գոյության միջոցների ապահովման, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի արտադրության, արդյունաբերության և ծառայություններ մատուցելու բնագավառների աճը խթանելու, էկոհամակարգի, ինչպես նաև արտադրված մթերքի ու մատուցված ծառայությունների ամբողջությունը ապահովելու հիմնական բաղադրիչն է:
Միևնույն ժամանակ ջուրը ջրհեղեղների, երաշտի և որոշ հիվանդությունների պատճառ է, որոնք հսկայական ազդեցություն կարող են ունենալ համայնքների և ազգային տնտեսության վրա: Համաձայն Միացյալ ազգերի՝ համաշխարհային ջրի զարգացման 2003թ.-ի զեկույցի՝ 1991-2000թթ. ժամանակահատվածում մոտ 665000 մարդ մահացել է 2557 բնական հիվանդություններից, որոնց 90%-ը առնչվել է ջրին, իսկ զոհերի 97%-ը զարգացող երկրներից էր[3]: Այս հիվանդություններից գրանցվող ամենամյա տնտեսական կորուստները 1990-1999թթ.-ին 30 մլրդ դոլարից աճել են մինչ 70 միլիարդ:
Այսպիսով, ինչպե՞ս կարող են երկրները հաղթահարել այս արգելքները՝ բավարարելով մարդկանց, արտադրության և էկոհամակարգերի ջրային կարիքները: Թե այս կամ այն երկիրը ինչ տարբերակ է ընտրում, կախված է նրա կարգավիճակից և զարգացման առաջնայնություններից: Սակայն կայուն զարգացման մեջ ջրային ռեսուրսների ներդրումը օպտիմալացնելու ցանկացած մոտեցում պետք է հաշվի առնի՝

- Տարբեր տիպի գործունեությունների բազմաթիվ և բարդ փոխկապակցվածությունները, որոնք, ազդելով հանդերձ, կախված են ջրային ռեսուրսների

---

[3] *Միացյալ ազգերի համաշխարհային ջրային ներդրումների պլան, 2003թ.: Միացյալ ազգերի համաշխարհային ջրային ռեսուրսների զարգացման զեկույցում նշվել է. «Ջուրը մարդկանց համար, ջուրը կյանքի համար»: Փարիզ, Նյու Յորք և Օքսֆորդ, ՅՈՒՆԵՍԿՈ (Միացյալ ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն) և Բերգհանայի գրքեր:*

զարգացումից ու կառավարումից. ՋՌՀԿ մոտեցումները կիրառելու դեպքում հնարավոր է վերջինիս իրագործումը:

- Ինչպես խթանել ջրի՝ որպես սահմանափակ ռեսուրսի ավելի արդյունավետ օգտագործումը:

Հստակեցնելով ՋՌՀԿ-ի «համապարփակ» հասկացությունը

ՋՌՀԿ մոտեցումը խթանում է ջրի, հողի և դրանց առնչվող ռեսուրսների համատեղ զարգացումն ու կառավարումը՝ նպատակ ունենալով առավելագույնի հասցնել սոցիալական և տնտեսական զարգացման ցուցանիշները՝ հավասարության հիմունքներով, միևնույն ժամանակ խուսափելով կենսական կարևոր էկոհամակարգի կայունության ապահովման փոխզիջումներից[4]:

Նման մոտեցումը ներառում է.

- հողի և ջրի,
- մակերեսային և գրունտային ջրերի,
- գետավազանի և դրա առափնյա ու ծովային միջավայրի,
- վերին և ներքին հոսքերի ջրօգտագործողների շահերի ավելի համակարգված զարգացում և կառավարում:

Սակայն ՋՌՀԿ-ն չի կառավարում միայն ֆիզիկական ռեսուրսները, այն նաև վերածնավորում է հասարակական համակարգը՝ հնարավորություն ընձեռելով կանանց և տղամարդկանց առավելագույնս օգուտ ստանալ դրանցից:

ՋՌՀԿ մեթոդի կիրառմամբ որոշումներ ընդունելիս և պլանավորելիս պահանջվում է, որ՝

- քաղաքականությունը և առաջնայնությունը հաշվի առնեն ջրային ռեսուրսներին առնչվող խնդիրները՝ ներառյալ մակրոտնտեսական քաղաքականության և ջրային ռեսուրսների զարգացման, կառավարման և օգտագործման երկկողմ կապերը,
- քաղաքական մշակումներում լինի միջբնագավառային ինտեգրում,
- շահագրգիռ կողմերը ձայնի իրավունք ունենան ջրի պլանավորման և կառավարման գործընթացում՝ հատուկ ուշադրության արժանացնելով կանանց և չքավոր խավի մասնակցության ապահովումը,
- տեղական և ջրավազանային մակարդակներով ջրային ռեսուրսներին առնչվող որոշումները ընդունվեն փոխկապակցված կամ ծայրահեղ դեպքում չբախվեն մեծածավալ ազգային նպատակներ իրագործելիս,
- ջրային ռեսուրսների պլանավորումը, զարգացման ռազմավարությունները և մեծածավալ սոցիալական, տնտեսական ու բնապահպանական նպատակները փոխկապակցվեն:

Գործնականում նշանակում է, որ ազգային պլաններում պետք է պատշաճ տեղ հատկացնել ջրին՝ ապահովելով այն որոշումներ ընդունողների «ջրային տեղեկացվածությունը», ովքեր պատասխանատու են տնտեսական քաղաքականությանը և ջրային ռեսուրսներին առնչվող բնագավառների քաղաքականությունների համար: Որոշումներ ընդունելիս կապի և տեղեկատվության փոխանակման արդյունավետ ուղիներ ստեղծել կառավարական գործակալությունների, կազմակերպությունների, շահագրգիռ խմբերի և հանրության միջև:

ՋՌՀԿ մեթոդի առավելությունները

Խնդիրների լուծում: Շատ երկրներ բախվում են ջրային ռեսուրսների կառավարման խնդիրների, որոնք էլ հաստատում են ներբնագավառային ընդունված մեթոդներով դրանք լուծելու դժվարությունները: Այդպիսի օրինակներ են երաշտը, ջրհեղեղները, գրունտային ջրերի վարարումը, ջրով փոխանցվող հիվանդությունները, ցամաքային և ջրային ռեսուրսների սպառումը, էկոհամակարգերի շարունակական վնասումը, գյուղական տարածքներում մշտապես առկա չքավորությունը և ջրային ռեսուրսների համար վեճերի աճը: Այս խնդիրները կարող են լուծվել ոչ ավանդական մոտեցումներով, և սովորաբար պահանջում են տնտեսական տարբեր ոլորտների համագործակցություն: Նման դեպքերում ՋՌՀԿ մոտեցումը դյուրին է դարձնում արդյունավետ որոշումներ ընդունելը և իրականացնելը՝ նաև խուսափելով այն բոլոր իրավիճակներից, որոնք, լուծելով մեկ խնդիր, ստեղծում են մյուսը:

---

[4] *Գլոբալ ջրային համագործակցության տեխնիկական խորհրդատվական կոմիտե (TEC) հիմնական ուղեցույց N-4: Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում (Ստոքհոլմ. Գլոբալ ջրային համագործակցություն 2000), էջ 22:*

Շրջանակ 1. ՋՌՀԿ-ի հիմնական սկզբունքները

ՋՌՀԿ-ն կարծրացած շրջանակ չէ, այլ ջրային ռեսուրսների կառավարման և զարգացման ճկուն և խելամիտ մոտեցում: Քանի որ չկան ՋՌՀԿ հաստատված «կանոններ», այն հիմնվում է Դուբլինի սկզբունքների վրա, որոնք հռչակում են՝

- Քաղցրահամ ջուրը սպառվող և խոցելի ռեսուրս է, կյանքի պահպանման, զարգացման և շրջակա միջավայրի կենսական կարևորություն: Քանի որ ջուրը պահպանում է կյանքը, ջուրն արդյունավետ կառավարելը պահանջում է նպատակային մոտեցում՝ սոցիալական և տնտեսական զարգացումը կապակցելով բնական էկոհամակարգերի պաշտպանությանը: Արդյունավետ կառավարումը շաղկապում է ողջ ջրահավաք ավազանի կամ ստորերկրյա ջրերի ջրատար շերտի հողային և ջրային ռեսուրսների օգտագործումը:
- Ջրի կառավարումն ու օգտագործումը պետք է հիմնվեն այնպիսի մոտեցումների վրա, որոնք նախատեսում են օգտագործողների, պլանավորողների, բոլոր մակարդակների քաղաքական գործիչների մասնակցություն: Մասնակցային մոտեցումը ներառում է որոշում ընդունող քաղաքական գործիչների և հասարակության՝ ջրի կարևորության իրազեկում: Սա նշանակում է, որ որոշումները կայացվում են ամենահնարավոր ստորին մակարդակում հանրության հետ բազմակողմանի խորհրդակցությամբ և պլանավորման ու ջրատնտեսական տարբեր ծրագրերի իրականացմանը ջրօգտագործողների մասնակցությամբ:
- Կանայք կարևոր դեր ունեն ջրով ապահովելու, այն կառավարելու և պաշտպանելու գործում: Կանանց՝ որպես ջրով ապահովողների, օգտագործողների և շրջակա միջավայրի պահապանների այս առանցքային դերը հազվադեպ է արտահայտվել ջրային ռեսուրսների զարգացման և կառավարման հիմնական գործընթացում: Այս սկզբունքի ընդունումն ու իրագործումը պահանջում է դրական քաղաքականություն՝ ուղղված կանանց հատուկ կարիքներին, իրավասություններ ընձեռելուն և ջրային ռեսուրսների ծրագրերում կանանց մասնակցությունն ապահովելուն՝ ներառյալ որոշումներ ընդունելը և մասնակցությունը՝ իրենց նախընտրած տարբերակով:
- Ջրօգտագործման բոլոր մրցակցային բնագավառներում ջուրն ունի տնտեսական արժեք, և պետք է դիտարկվի որպես տնտեսական ապրանք: Ըստ այս սկզբունքի՝ նախ և առաջ ճանաչվում է բոլոր մարդկանց՝ մատչելի գնով մաքուր ջրի հասանելիության և սանիտարահիգիենիկ ծառայություններից օգտվելու իրավունքը: Ջրի տնտեսական արժեքի բացառումը նախկինում հանգեցրել է այդ ռեսուրսի անխնա և էկոլոգիական տեսակետից վնասակար օգտագործման: Ջրային ռեսուրսները որպես տնտեսական ապրանք կառավարելը արդյունավետ և արդարացի օգտագործման կարևոր մոտեցում է, ինչպես նաև ջրային ռեսուրսների պաշտպանության ու պահպանման[5] խթանիչ:

Խուսափում չարդարացվող ներդրումներից և ծանր սխալներից: Դիտարկողի տեսանկյունից հապճեպ ընդունված որոշումները հազվադեպ են արդյունավետ լինում և կարող են հանգեցնել անկայուն նվաճումների, անկանխատեսելի հետեվանքների և բաց թողած հնարավորություններին առնչվող շատ ծանր սխալների:

Ներդրումներ կատարելու որոշումները պետք է հիմնվեն ծախսերի և օգուտների գնահատումների վրա, որոնք էլ կապահովեն լայնածավալություն և երկարատևություն: Անհրաժեշտ է հաշվի առնել ենթակառուցվածքի շահագործման տնտեսական ազդեցությունները, ջրատնտեսական ծառայությունները և հետգնման/փոխհատուցման հնարավորությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա դրանց կարճատև և երկարատև ազդեցությունը: Ջրատնտեսական համակարգերի նախագծման և ֆինանսական կայունության հաշվարկների որոշումներ կայացնողները պետք է հաշվի առնեն նաև գերակշիռ մակրոտնտեսական պայմանները և ջրատնտեսական գործունեության վրա այդ պայմանների ազդեցության բնութագրերը (շահ, փոխանակման կուրս և այլն): Չիլին զուգահեռներ անցկացնելու լավ օրինակ է՝ պարզելու, թե ինչպես է համապատասխան մակրոտնտեսական քաղաքականությունը խթանում հասարակության զարգացման գործընթացում ջրատնտեսական հարցերի ներառումը և ջրատնտեսական համակարգերի ծառա-

[5] *Ջրային ռեսուրսների և կայուն զարգացման վերաբերյալ Դուբլինի հայտարարություններից, ջրի և միջավարի վերաբերյալ միջազգային կոնֆերանսից, Դուբլին, 1992:*

յությունների ապահովման հնարավորությունները: Ոչ հեռանկարային կամ բնագավառային մտածելակերպից տուժում է միայն շրջակա միջավայրը՝ վնասակար հետևանքներ թողնելով նաև սոցիալական և տնտեսական զարգացման վրա: Օրինակ՝ Արալի աղետի դեպքում ոռոգման զարգացումը հանգեցրեց թանկարժեք ձկնորսական վայրերի կորստի, տարածքի կլիմայի փոփոխության և լճի ցամաքելու շարունակական խնդիրների: ՋՌՀԿ մոտեցումը խթանում է շրջակա միջավայրի վրա ազդեցության վերահսկումը:

Այն հնարավորություն է տալիս խուսափելու անկայուն զարգացման, իսկ հետագայում՝ նաև վնասը վերացնելու մեծ ծախսերից: Օրինակ՝ Ասիայում ցամաքային և ջրային ռեսուրսների դեգրադացման վնասների հատուցումը գնահատվել է տարեկան 35մլրդ[6] ԱՄՆ դոլար: ԱՄՆ-ում միայն Էվերգլանդի խոնավ տարածքների վերականգնման բյուջեն կազմում է 10մլրդ ԱՄՆ դոլար:

Առավելագույն օգուտ ենթակառուցվածքում ներդրումներ կատարելուց

ՋՌՀԿ մոտեցմամբ ենթակառուցվածքի պլանավորումը, նախագծումն ու, ի վերջո, կառավարումը ապահովում է ներդրման ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական առավելագույն փոխհատուցում: Ենթակառուցվածքի զարգացումն ինքնին փոխհատուցման սահմանափակ հնարավորություն է ընձեռնում, և հաճախ անհրաժեշտ են այլ միջոցներ՝ մարդկանց օգտակար լինելու համար:

Այսպես, մի շատ հասարակ օրինակ. Աֆրիկայում՝ Սահարայի մերձակայքում, կին ագարակատերերից մեկը փորձում է ընտանեկան հողակտորում իր երեխաների համար ինչ-որ բան աճեցնել և շահույթ ստանալ: Նա կարող է օգտագործել ոռոգման ենթակառուցվածքով ապահովվող իր առավելությունները միայն այն դեպքում, եթե ինքը և ընտանիքի անդամները առողջ են, ինքը հնարավորություն ունի պաշտպանելու ջրային ռեսուրսներից և հուսալի ոռոգման ջրամատակարարումից օգտվելու իր իրավունքները, ունի որոշակի գիտելիքներ, և եթե իրեն մատչելի են գյուղատնտեսական ռեսուրսները, սպառման շուկան, վարկերը, հերկելու, բերքը հավաքելու և տեղափոխելու միջոցները:

Պլանավորման խոշորացված գործընթացի մեջ ջրի զարգացումը ներառելը խթանում է ներդրումների ավելի արդյունավետ փոխհատուցումը, քան այն մոտեցման դեպքում, երբ հաշվի են առնվում միայն տնտեսության մեկ բնագավառի պահանջները:

Ենթակառուցվածքի նախագծման և կառավարման ժամանակ ՋՌՀԿ մոտեցումը հնարավորություն է ընձեռում օգուտներ ստանալու նաև ոլորտների հնարավոր համատեղումից: Օրինակ՝ համատեղելով ձկնարդյունաբերությունը և ոռոգումը կամ զարգացնելով ջրամատակարարման համակարգերը, համատեղելով կենցաղային և արդյունաբերական ջրամատակարարումը:

Ջրային ռեսուրսների տեղաբաշխման ռազմավարական մոտեցում

Շատ երկրներ իրենց ընթացիկ ջրօգտագործումը ուսումնասիրելիս հայտնաբերել են, որ՝ 1) ռազմավարական տեսակետից ազգային նախագծերն իրագործելիս բավականաչափ չեն ուսումնասիրել ջրամատակարարումը, 2) ջրային համակարգերը գետավազանի կամ ազգային մակարդակով կառավարելու համար աշխատանքների որակը մինչև այժմ ցածր է, 3) ջրի բաշխման մասին որոշումների և ազգային զարգացման ու տնտեսական պլանավորման կապերը կա՛մ թույլ են, կա՛մ ընդհանրապես գոյություն չունեն:

Ջրային ռեսուրսների ռազմավարական հիմնավորված բաշխումը պահանջում է տնտեսական առանձին ոլորտների և ջրօգտագործող տարբեր խմբերի ստորադասում համազգային նպատակների:

ՋՌՀԿ մոտեցումը հնարավորություն է ընձեռում երկրներին ջրի բաշխումը դիտարկել կայուն զարգացման «խոշորացված պատկերի» համատեքստում (որպես օրինակ տե՛ս Յեմենի դեպքը. Շրջանակ 2):

Ջրի ռազմավարական բաշխումը հազվադեպ է իրագործվում վարչական հրամանով: Սովորաբար այն ձեռք է բերվում անուղղակիորեն՝ հաճախ մեծացնելով ջրօգտագործման արդյունավետությունը այնպիսի գործիքներ կիրառելով, ինչպիսիք են գնագոյացումն ու սակագները, համապատասխան ազդակների ու լրահատկացումների ներդրումը, ինչպես նաև վերջիններս վերացնելը ջրային ոլորտի ներսում և դրանից դուրս:

[6] *Ջալալ Կ. և Պ. Ռոջերս, 1997: Միջավայրի որակի չափում Ասիայում: Քեմբրիջ, Հարվարդի համալսարանի մամուլ:*

Շրջանակ 2. ՋՈՒՀԿ, որը կենդանացրեց Յեմենի տնտեսական զարգացումը

Յեմենում ՋՈՒՀԿ մոտեցումը ներդնելը տնտեսական, ֆինանսական և կառավարման բարեփոխումների հիմնական մասն էր, որը կիրառվեց երկրի տնտեսությունը կործանումից փրկելու համար: 1990-ականների առաջին կեսերին Յեմենը քայքայվում էր մասսայական գործազրկությունից, սղաճից և բյուջեի սակավությունից: Շատ ավազաններում ոռոգման նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսների ինտենսիվ օգտագործման համար երկիրը տարեկան ծախսում էր 0,5 մլրդ ԱՄՆ դոլար: Երկրում ջրային ռեսուրսների կառավարումն առանձնանում էր կառուցվածքային մասնատվածությամբ, վատ կառավարմամբ և քաղաքական ոչ պատշաճ շրջանակով: ՋՈՒՀԿ մոտեցումը օգնեց քաղաքականություն մշակողներին անդրադառնալու ստորերկրյա ջրային ռեսուրսներ հայթայթելու խնդրին՝ ավելի արդյունավետ բազմաճյուղ մոտեցում կիրառելով՝ ներառյալ դիզելային վառելիքին և սարքավորումներին տրամադրվող դրամական օժանդակության նվազեցումը: ՋՈՒՀԿ առաջարկեց նաև երկրի սակավ ջրային ռեսուրսների օգտագործումը պլանավորելիս հաշվի առնել տնտեսական զարգացման նպատակները: Այս ուսումնասիրություններից ելնելով՝ առաջարկվեց ջրային ռեսուրսները գյուղատնտեսությունից առավել արդյունավետ բնագավառ տեղափոխելու ռազմավարություն, քանի որ վերջինս օգտագործում էր ջրային ռեսուրսների 85-90%-ը, բայց ապահովում՝ ՀՆԱ–ի միայն 15%-ը[7]:

Մինչ ուղղակիորեն «ավելի շատ ջուր մատակարարելը» (որը հաճախ նշանակում է նոր և թանկարժեք ենթակառույց ստեղծել) ջրօգտագործման արդյունավետությունը բարելավելու հնարավորություններ փնտրելիս առանցքային քայլը պետք է լինի վատնողական օգտագործման նվազեցումը կամ էլ վերաբաշխումը:

Չինաստանի հյուսիսում կառավարությունը կարողացավ գյուղատնտեսության մեջ օգտագործվող ջուրը բաշխել աճող քաղաքների ու արդյունաբերության կարիքները բավարարելու համար՝ ջրի գնագոյացման համալիր ծրագրով, խթանումներով և նորարարական տեխնոլոգիաներ կիրառելով: Արդյունավետ օգտագործում ապահովելու համար ջրի բաշխման «անուղղակի» գործիքներ կիրառելը պահանջում է միջոլորտային համագործակցություն:

Ջրի արդյունավետության դերը

Ջրին և դրան առնչվող ռեսուրսների (ներառյալ նաև ֆինանսականը) օգտագործման արդյունավետությունը բարձրացնելը ջրի՝ որպես սահմանափակ ռեսուրսի օգտագործման արդյունքում առավելագույն տնտեսական և սոցիալական օգուտ ստանալու այլ ճանապարհ է, որն էլ ՋՈՒՀԿ մոտեցման բաղկացուցիչ մասն է: Մինչ պարզապես «ավելի շատ ջուր մատակարարելը» (որը հաճախ նշանակում է նոր և թանկարժեք ենթակառույց ստեղծել) որպես առաջին քայլ անհրաժեշտ է դիտարկել ջրօգտագործման արդյունավետությունը բարձրացնելը՝ կա՛մ անարդյունավետ ջրի կորուստները կրճատելով, կա՛մ ջրի վերաբաշխմամբ: Երբ հյուսիսային Ֆրանսիայի քաղաքները և արդյունաբերական կենտրոնները պարզեցին, որ մեծ քանակությամբ ջրօգտագործման արդյունքում գրունտային ջրերի պաշարների արագ անկման պատճառով վտանգված է իրենց ջրամատակարարումը, ապա ջրամատակարարման բարելավման համար առաջարկեցին գետի վրա 30 մղոն հեռավորությամբ ամբարտակ կառուցել և ներսում խողովակաշար տեղադրել կամ էլ աղազերծող կայան կառուցել: Իսկ արժե՞քը. 1մլրդ ԱՄՆ դոլար ֆրանսիացի հարկատուների համար: Բայց քաղաքական որոշում ընդունողները դրա փոխարեն այլ լուծում ընտրեցին: Առաջարկվեց հարկել ջրաշերտից պոմպերով դուրս մղվող ամեն խորանարդ մետրը: Հարկ վճարելու պարտավորությունից ազդված՝ արդյունաբերողներն ու քաղաքները գտան, որ կարող են նվազեցնել ջրօգտագործման քանակը, և արդյունքում այդ տարածաշրջանի գրունտային ջրերի սպառումը այժմ կայուն է[8]: ԿՋՀԳ-ի գործունեությունը ընդգծում է արդյունավետության 2 ոլորտներ. առաջինը՝ ջրօգտագործման տեխնիկական արդյունավետություն, երկրորդը՝ ջրաբաշխման, այսինքն՝ այն արդյունավետությունը, որով հանրությունը բաշխում է ջուրը և հասարակական ռեսուրսները սոցիալական ու տնտեսական կայուն զարգացման համար: Առաջին մոտեցումը կոչ է անում ջրային ռեսուրսները կառավարելու միջոցառումներ ձեռնարկել, իսկ երկրորդը ներառում է ջրաբաշխման ռազմավարություն (ինչպես նշվեց նախորդ բաժնում): Ըստ ՋՈՒՀԿ մոտեցման՝ թե՛ տեխնիկական, թե՛ ջրաբաշխման արդյունավետությունը պահանջում է ջրի սոցիալական, շրջակա միջավայրի, ինչպես նաև տնտեսագիտական արժեքի իմացություն:

[7] *Դեպքի ուսումնասիրությունը վերցված է Ասլամ Չովդրիից*

[8] *Դեպքի ուսումնասիրությունը վերցված է Իվան Շեղեից:*

Ջրային ռեսուրսների տեխնիկական արդյունավետությունը բարձրացնելու ուղղություններ

Օգտագործման արդյունավետություն: Սրան հաճախ հասնում են ջրօգտագործողի վարքի փոփոխության շնորհիվ. օրինակ՝ տեղեկատվական քարոզարշավներով, տնտեսական համոզմունքներով և տեխնոլոգիական միջոցներով (չափագրման և նախագծման), որոնք հիմնականում վերաբերում են «պահանջարկը կառավարելուն»: Ֆրանսիայի օրինակում (վերը նշված) արդյունավետությունը վերականգնվեց ջրաշերտից դուրս մղվող ամեն խորանարդ մետրը հարկելու շնորհիվ: Չիլիում հողամշակ ջրօգտագործողները նպատակադրված են բարձրացնել ջրի արդյունավետությունը ոչ թե ջրի գինը ավելացնելով, որը նվազագույնն է, այլ իրենց՝ միջազգային շուկա արտահանվող բերքի բարձր գնի շնորհիվ: Ավելի արդյունավետ ջրօգտագործում նշանակում է մեծ տարածքների ոռոգում, որն էլ կընդլայնի արտադրության ծավալները, իսկ դա էլ՝ օգուտը:

Ջրի վերաօգտագործում և վերամշակում: Ջրի անբավարար քանակ ունեցող ավազաններում ջրի վերաօգտագործումն ու վերամշակումը ընդունված երևույթ է: Օրինակ՝ Եգիպտոսում և Հյուսիսային Չինաստանում ջուրը վերաօգտագործելու նպատակով դրենաժային առվակների վրա հողամշակների համար փոքրիկ պոմպեր տեղադրելը սովորական է: Ոռոգման գործակալությունը աջակցում է վերաօգտագործման ռազմավարությանը. դրենաժային ջուրը խառնում են թարմ ջրին մատակարարումների այդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Վերամշակվող և վերաօգտագործվող ջրի կառավարման հիմնական խնդիրները աղտոտվածությունը վերահսկելը, հողի և ջրի աղակալումը կանխարգելելը և, հատկապես, վերաշրջանառվող, արտանետված ջրերից առողջությունը վտանգող տարրերը հեռացնելն են:

Ջրամատակարարման արդյունավետություն: Ջրամատակարարման արդյունավետությունը պայմանավորված է ոռոգման համակարգերի քաղաքային ջրամատակարարման սխեմաների և այլ ջրային ենթակառույցների արդյունավետ գործելով: Ջրամատակարարման արդյունավետությունը բարձրացնելու հնարավոր միջամտությունները ներառում են քաղաքային ջրամատակարարման համակարգերի բաց թողնող հատվածների ամրացում, հորային ոռոգման և չոր կոյուղու նման նորամուծությունների ներկայացում: Ոռոգելի տարածքներում ջրամատակարարման արդյունավետությունը բարձրացնելիս անչափ կարևոր է հիշել՝ 1) ոռոգման համակարգերում ջրի շրջանառության և վերաօգտագործման լայնածավալության պատճառով ջրամատակարարման արդյունավետությունը բարձրացնելու ջանքերը պետք է կենտրոնացվեն համապարփակ ավազանի համատեքստում (ոռոգման ջրանցքերից և դաշտերից հոսող ջուրը կարող է փաստորեն վերալիցքավորել գրունտային ջրերը կամ աջակցել էկոհամակարգերին), 2) ջրամատակարարման արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերը պետք է ձեռնարկվեն մշակված քաղաքականությանը համատեղ՝ համոզվելու համար, որ պահպանված ջուրն ուղղվում է շահութաբեր այլ ուղղություններ:

Ջրային ռեսուրսների տեղաբաշխվածության արդյունավետության բարելավման ուղղություններ:

Ջրային ռեսուրսների տեղաբաշխվածության արդյունավետության հասնում են միայն՝ ձեռնարկելով մի շարք միջոցներ, որոնք ապահովում են ջրային ռեսուրսների առավելագույն արդյունավետ օգտագործում, օրինակ՝ ջրի շուկայի, ջրի իրավունքների կամ այլ տնտեսագիտական կարգավորող մեխանիզմների և ծախսերի, ինչպես նաև շահույթների տեղին և իրատեսական գնահատմամբ: ՋՌՀԿ մոտեցման տեսակետից շատ կարևոր է, ուշադրություն դարձնելով սոցիալական, բնապահպանական և տնտեսական ուղղություններին, գտնել «առավելագույն շահութաբեր օգտագործման միջոցներ», այսինքն՝ պետք է գնահատել ծախսերն ու շահույթները՝ ելնելով սոցիալական և բնապահպանական ցուցանիշներից: Սա ենթադրում է, օրինակ, տնտեսական և կարգավորվող մեխանիզմների օգնությամբ համարժեք էկոլոգիական հոսքերի ապահովման ժամանակ կենտրոնանալ ցամաքային և ջրային էկոհամակարգերի կենսաբազմազանությանը և արտադրողականությանը: Ցածր շահույթ ունեցող երկրներում այն ներառում է նաև կենտրոնացում

Շրջանակ 3. ՋՌՀԿ մոտեցման վերափոխումների տասներեք առանցքային ուղղություններ

ՋՌՀԿ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

1. Քաղաքականություն - ջրային ռեսուրսների օգտագործման համար նպատակների, պաշտպանության և պահպանության ստեղծում:
2. Օրենսդիր շրջանակ - քաղաքականությանն ու նպատակներին հասնելու կանոններ:
3. Ֆինանսավորող և համախոհ կառույցներ - ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխում՝ ջրային ռեսուրսների կարիքները հոգալու համար:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԴԵՐԵՐ

4. Ստեղծման և կազմակերպման շրջանակ - կառուցվածք և գործունեություն:
5. Կառուցվածքային համատեղելիության ստեղծում - մարդկային ռեսուրսների զարգացում:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

6. Ջրային ռեսուրսների գնահատում - գիտակցել ռեսուրսներն ու կարիքները:
7. ՋՌՀԿ մոտեցման պլաններ - զարգացման տարբերակների, ջրային ռեսուրսների օգտագործման և մարդկային փոխհարաբերությունների համատեղում:
8. Պահանջարկի կառավարում – ջրային ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործում:
9. Սոցիալական վերափոխումների միջոցներ – քաջալերել ջրի հիմնախնդիրներով զբաղվող քաղաքակիրթ հասարակությանը:
10. Տարածայնությունների հարթում – տարածայնությունների հարթում՝ ապահովելով ջրային ռեսուրսների բաշխում:
11. Կարգավորող գործիքներ - տեղաբաշխման և ջրօգտագործման սահմաններ:
12. Տնտեսական միջոցներ – օգտագործել արժեքն ու գինը արդյունավետության և հավասարության համար:
13. Տեղեկատվության կառավարում և փոխանակում - գիտելիքների բարելավում՝ ջրային ռեսուրսների ավելի լավ կառավարման համար:

չքավորությունը նվազեցնելուն, օրինակ՝ ինչպես կարող է հասարակությունը ջրային ռեսուրսները զարգացնելու և կառավարելու միջոցով լավագույնս ապահովել ռեսուրսների հասանելիությունը, կանանց ու տղամարդկանց աշխատանքի հնարավորությունները:

ՋՌՀԿ-ն՝ որպես փոփոխությունների միջոց

ՋՌՀԿ մոտեցումը պահանջում է դրական փոփոխություններ միջավայրում, կառուցվածքային դերերում և կառավարման մեթոդներում (տե՛ս Շրջանակ 3, էջ 12):
Ըստ էության դա նշանակում է ջրային բնագավառի կառավարման բարեփոխումներ. այսինքն՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական և գործադիր այնպիսի գործիքների հավաքածու, որը հնարավորություն կտա կառավարելու ջրային ռեսուրսները և տարբեր սոցիալական խավերի համար կապահովի ջրատնտեսական ծառայություններ: Հիմք ընդունելով, որ տվյալ բարեփոխումները մոտեցման հիմնական մասն են, ՋՌՀԿ-ն պետք է դիտվի իբրև գործընթաց և ոչ թե միջոցների միաժամանակյա ձեռնարկում: Այն զարգացման երկարատև գործընթաց է՝ իր էությամբ ավելի շատ կրկնվող, քան ուղղընթաց (տե՛ս նկար 1):
Այս ամենով հանդերձ պետք է ստեղծել արդյունավետ կառավարման կառույց, որը խթանում է հիմնաժամկետ ճիշտ որոշումներ կայացնելը՝ արձագանքելով փոփոխվող կարիքներին ու գործելաոճին:
Որպես վերափոխման ընթացք՝ ուշադրությունը կենտրոնացնել ջրային ռեսուրսների զարգացման և կառավարման համակարգերին: ՋՌՀԿ-ն չունի գրանցված սկիզբ և վերջ: Համաշխարհային տնտեսությունն ու հասարակությունը շարժուն զարգանում են. փոփոխությունների է ենթարկվում նաև շրջակա միջավայրը: Հետևաբար ՋՌՀԿ-ն պետք է պատրաստ լինի փոփոխությունների և ունակ հարմարվելու նոր տնտեսական, սոցիալական և բնական պայմաններին, ինչպես նաև հասարակական արժեքների փոփոխություններին: Կառավարման լայնածավալ բարեփոխումների բախված քաղաքական գործիչներին և մասնագետներին շատ հեշտ կլինի ամփոփել՝ հավաստելով, որ այն լի է չափազանց դժվարին փոխհարաբերություններով: Բայց ՋՌՀԿ մոտեցմանը հետևել չի նշանակում՝ ունեցածը դեն նետել ու սկսել մաքուր էջից: Այլ նշանակում է հարմարվողականություն և

վերակառուցում՝ հիմնվելով առկա կազմակերպչական համակարգերի և պլանավորման գործընթացների վրա՝ համապարփակ մոտեցման հասնելու համար:

Ջրի ընթացիկ ծախսը իրատեսորեն գնահատած երկրների մեծ մասը ընտրել է ՋՌՀԿ մոտեցումը: Նրանք հասկացել են, որ ոլորտային մոտեցումները առաջացնում են որոշ հիմնարար բնագավառների ջրամատակարարման խզումներ: Մալազիայում ոլորտային մոտեցումները բավարար չեն եղել սակավ ջրային ռեսուրսներն արդյունավետ բաշխելու, ջրհեղեղները կամ աղտոտումները վերահսկելու և շրջակա միջավայրը պահպանելու համար: Կոստա Ռիկայում չէր հաջողվում հարթել ջրային ռեսուրսների օգտագործման պատճառով ծագած տարաձայնությունները, շրջակա միջավայրի և ջրհեղեղների խնդիրները: Յեմենում անզոր էին գրունտային ջրերի անխնա հանքարդյունաբերության կամ լճացած տնտեսության գնահատման հարցում (տե՛ս Շրջանակ 2, էջ 10):

Այս և մյուս երկրները հասկացան, որ նմանատիպ խնդիրների արդյունավետ անդրադառնալը անհրաժեշտ է՝ մարդկանց կենսակերպը բարելավելու և երկրի բարգավաճման համար: Համապարփակ և համընդհանուր մոտեցումը ջրային ռեսուրսները դիտում է տարբեր կառուցվածքային համակարգերի համատեքստում. տարբեր, հաճախ մրցակցող օգտագործումները և ջրային ռեսուրսների սակավությունը կայուն զարգացման հիմքն են:



Նկար 1: ՋՌՀԿ-ն փոփոխվող իրավիճակների և կարիքների համար պատասխանատու շարունակական գործընթաց է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽԹԱՆՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ի տարբերություն պլանավորման մասնավոր դեպքի՝ ռազմավարություն ստեղծելու գործընթացը երկրներին հնարավորություն է ընձեռում՝ հստակ ներկայացնելու, թե ինչ կարելի է անել կառավարումը բարելավելու և ջրային ռեսուրսները օգտագործելու համար՝ հաշվի առնելով կայուն զարգացման հետագա նպատակները:
Որոշ երկրներ կարող են սկսել՝ ընտրելով տարբեր ուղիներ, որոնցում առկա է ջրային ռեսուրսները զարգացնելու և կառավարելու կամ զարգացման նպատակները բարելավելու արգելք: Մյուսները կարող են ընտրել ավելի նպատակային մոտեցում և կենտրոնանալ հատուկ ջրային ռեսուրսներին առնչվող խնդիրներին, որոնք խոչընդոտում են նպատակներին հասնելը:
Երկրները կարող են մշակել նոր ռազմավարություն նախկին ջրատնտեսական պլանների և ՋՌՀԿ մեթոդների հիման վրա կամ ներառել ջրատնտեսական ընթացիկ խնդիրները արդեն գոյություն ունեցող ռազմավարություններում:
Եթե անտեսվի նախնական մոտեցումը, ապա ռազմավարությունները պետք է դուրս գան ընթացիկ խնդիրները կամ միջանկյալ առաջադրանքներ լուծելու սահմաններից: Դրանք պետք է ուղղվեն առնվազն փոփոխություններ ապահովելուն, որոնք կօժանդակեն երկարաժամկետ հիմքով ստուգված և համաձայնեցված որոշումներ ընդունելուն:
Հետևյալ գլուխը ներկայացնում է ռազմավարությունը զարգացնելու գործընթացին անհրաժեշտ որոշ ուղղություններ՝ հստակեցնելով վերափոխումների ու որոշումների այն ուղղությունները, որոնց համար պետք է ռազմավարություն մշակվի:

ԿՋՀԳ գործողությունների պլանի հիմնական կոչը

ԿՋՀԳ գործողությունների պլանի 26-րդ հոդվածը, ՋՌՀԿ մոտեցումը զարգացնելուց և ջրային ռեսուրսների արդյունավետության ռազմավարություններին կոչ անելուց բացի, ներառում է մի շարք այնպիսի հիմնախնդիրների հատուկ ցուցումներ, որոնց համար պետք է ռազմավարություն մշակվի՝ անդրադառնալով վերջիններիս կիրառման ձևերին ու չափերին (տե՛ս Լրացում 1՝ 26-րդ հոդվածին ամբողջությամբ ծանոթանալու համար): Երկրները պետք է որոշեն, թե որ ցուցումներն են իրենց արդյունավետ, որոնք՝ ոչ կամ ոչ առաջնահերթ: 26-րդ հոդվածի մի քանի արդյունավետ ռազմավարություններ մշակելու ցուցումներ ներառում են հետևյալը՝

- Ռազմավարությունները պետք է օժանդակեն երկրներին և տարածաշրջաններին անցնելու ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման և ավելի արդյունավետ կիրառելով քաղաքական միջոցների ողջ շղթան:
- Ռազմավարությունները պետք է ընդգրկեն կառուցվածքային, ֆինանսական և տեխնիկական փոփոխություններ՝ խթանելով դրանք բոլոր մակարդակներում:
- Գետային (կամ ջրային) ավազանը պետք է օգտագործվի որպես համապարփակ կառավարման հիմնական հանգույց:
- Ռազմավարությունները պետք է առաջնությունը տան մարդկանց հիմնական կարիքները հոգալուն՝ հավելյալ միջոցներ ձեռնարկելով չքավոր խավի համար:
- Ռազմավարությունները պետք է լուծեն հիմնախնդիրներ՝ հավասարակշռելով էկոհամկարգերի վերականգնելու և պահպանելու անհրաժեշտությունը այլ ջրօգտագործումների հետ: (տե՛ս Շրջանակ 4, էջ 17):
- Արդյունավետ ռազմավարության տարրեր են շահագրգիռ կողմերն ընդգրկելը, զարգացման կարողություններ ստեղծելը, հանրային և մասնավոր ընկերությունների պատասխանատվությունը ընդլայնելը:
- Ռազմավարությունները պետք է հաշվի առնեն տեղական պայմանները և հարմարեցվեն դրանց:

Նախնական ռազմավարության ընտրություն

Տեսականորեն բազմակողմանի մոտեցումը, որը օպտիմալացնում է ջուրը կայուն զարգացման մեջ ներառելը, ավելի մեծ ազդեցություն պետք է ունենա: Գործնականում որոշակի խնդրից սկսելով՝ կարելի է հասնել ավելի լավ արդյունքների: Հենց սկզբից չափից ավելի զգացմունքայնությունը (արհամարհելով քաղաքական, սոցիալական խնդիրներն ու կարողության սահմանագիծը, որոնք պետք է հստակեցվեն բարեհաջող իրականացման համար) կարող է հանգեցնել ռազմավարության զարգացման, որը թեև հրաշալի է թղթի վրա, բայց գործնականում՝ անիրագործելի: Փորձը ցույց է տալիս, որ նախնական վերափոխումների աղբյուր են դառնում ոչ թե գերազանց պլանավորված փոփոխությունները, այլ առաջին պարզ քայլերը, որոնք բավարար են ջուրը ավելի կայուն զարգացնելու ու կառավարման գործընթացն ուղղորդելու համար:

Ըստ ԳՋՀ-ի ոչ պաշտոնական ուսումնասիրությունների՝ այն երկրները, որոնք առաջադիմել են ջրային ռեսուրսների ավելի համապարփակ և կայուն մոտեցումներում, հաճախ սկսել են ջրային ռեսուրսների զարգացման նպատակներին առնչվող առանձին խնդիրներին կենտրոնանալուց: Հարավային Աֆրիկան զարգացրել է աշխարհում ջրային ռեսուրսների կառավարման ամենաարդյունավետ մոտեցումներից մեկը. առաջնահերթ ուշադրություն յուրաքանչյուր քաղաքացու՝ բարձրորակ խմելու ջրով ապահովելուն:

Այս մոտեցումը ավելի դյուրին կուղղորդի շոշափելի և առաջնահերթ խնդիրների վրա հիմնված գործնական պլանների և կարող է ծավալուն աջակցություն ցուցաբերել հանրությանը: Թեև այն կարող է նաև հանգեցնել փակուղու կամ ավելի լայնածավալ մոտեցումներում անհեռատես որոշումների: Այս վտանգներից խուսափելու բանալին համոզվելն է՝ արդյոք ռազմավարությունը հստակորեն առնչվում է ավելի ծավալուն կայուն զարգացման նպատակների, և նպատակը ոչ թե որևէ մասնավոր խնդիր լուծելն է, այլ գործընթացից օգտվելու հնարավորությունը բաց չթողնելը, որը կառաջնորդի առավել հաջողված, ջրային ռեսուրսների երկարաժամկետ զարգացման և կառավարման:

Որոշ հնարավոր սկզբնական քայլեր

- Հազարամյակի զարգացման նպատակներին հետևող երկրները որպես առաջին քայլ կարող են համատեղել ջրային ռեսուրսների զարգացումը և կառավարումը՝ համընդհանուր նպատակների հասնելու համար:
- Այլ երկրներ կարող են կենտրոնանալ պարբերաբար կրկնվող, ջրային ռեսուրսների ազգային տնտեսության զարգացումը խոչընդոտող խնդիրները լուծելուն (ինչպես կառուցվածքներում և ենթակառույցներում ռազմավարությունները հզորացնելով, երաշտի և ջրհեղեղի վնասները նվազեցնելով):
- Արդյունաբերական երկրները կարող են առաջնահերթ ուշադրություն դարձնել անկայուն իրավիճակների լուծմանը և նախկին քաղաքականության հետևանքները մեղմացնելուն:
- Անդրսահմանային գետերը կիսող երկրները՝ մասնավորապես նրանք, որոնք հոսքով ներքև են ավելի հզոր հարևաններից, սկզբում կարող են կենտրոնանալ ջրային ռեսուրսների բաշխման խնդրին (տե՛ս Շրջանակ 6, էջ 26) ոչ որպես համապարփակության լրացուցիչ աստիճան, այլ որպես ավելի որակյալ և արդյունավետ ազգային տնտեսության որոշումներ ընդունելու հնարավոր խթանիչ:
- Կղզյակային զարգացող երկրները կարող են կենտրոնանալ ափամերձ շրջանների կառավարմանը՝ զարգացնելով կառավարման և խմելու ջրի ու ծովափնյա ռեսուրսների կապերը:

Այն երկրներում, որոնցում բացակայում է ՋՈՀԿ ռազմավարությանն անհրաժեշտ քաղաքական աջակցությունը, կարող է արդյունավետ լինել նախնական որոշումը՝ կենտրոնանալ 1 կամ 2 շրջանների, որտեղ առավելագույնս ակնառու են ջրային ռեսուրսներին առնչվող խնդիրները և դրանք օգտագործել որպես ուղեցույց՝ ՋՈՀԿ մոտեցման արդյունավետությունը ցուցադրելու համար:

Շրջանակ 4. Ջրային ռեսուրսների պահպանում շրջակա միջավայրի կարիքները բավարարելու համար

Ինչպես ԿՁՀԳ-ի գործունեության թիրախում, այնպես էլ ՁՈՀԿ ամբողջ հասկացության մեջ առաջնային է էկոհամակարգի պահպանության և այլ պահանջների ներդաշնակության հաստատումը:
Որոշ թիրախ - կետեր՝

- էկոհամակարգի պահպանությունը պետք է վերաբերի ինչպես ցամաքային, այնպես էլ ջրային էկոհամակարգերին:
- Ցամաքային էկոհամակարգերը ոչ միայն կախված են ջրային ռեսուրսներից, այլ հենց իրենք են ազդում ջրային ռեսուրսների վրա: Օրինակ՝ չոր արևադարձային շրջաններում բուսական մակերևույթի փոփոխությունը (հատկապես անտառային շրջաններում) կարող են ազդել ջրհոսքի վրա և փոխել գրունտային ջրերի շրջանառությունը:
- Ջրային էկոհամակարգերը առավելագույնս կախված են ջրի ներհոսքի քանակից, հաճախականությունից և որակից:
- Ամբողջ աշխարհում էկոլոգիական հոսքի ծավալները որոշվել են բազմաթիվ տարբերակներով և կազմում են ավազանի բազմամյա հոսքի 20-50%-ը:
- էկոհամակարգը արժեքավորելիս կարևոր է հաշվի առնել դրա սոցիալական և տնտեսական նպատակների արդյունավետությունը:

Խնդիրների և գերակայությունների որոշում

Սկզբնական դիրքորոշումը հստակեցնելուն պես պետք է որոշվեն նաև բխող կարևոր խնդիրները: Այս մակարդակում հատկապես շատ կարևոր է հաշվի առնել նաև որոշակի խնդրի կամ հիմնահարցի ուղղված այլ ռեսուրսների (հող, էներգիա, ձկնորսական տարածքներ, անտառներ, անասունների գլխաքանակ, ինչպես նաև այլ ոլորտներ՝ գյուղատնտեսություն, տուրիզմ, փոխադրամիջոցներ, միջավայր, առողջապահություն, կրթություն, ֆինանսներ, արդյունաբերություն) հավանական դերը:

Առկա խնդիրները հստակեցնելու օրինակներ

Չքավորության կրճատմանն առնչվող՝

- Ինչպես ընդլայնել արդյունաբերության մեջ ջրային ռեսուրսների օգտագործման հնարավորությունը: Օրինակ՝ գրունտային ջրերի զարգացման ոչ թանկարժեք փոքրամասշտաբ տեխնոլոգիաների և ջրային ռեսուրսների բազմանպատակային համակարգի միջոցով:
- Ինչպես ճշտել չքավոր մարդկանց ջրային ռեսուրսներին առնչվող կարիքները:
- Ջրային ռեսուրսների զարգացման և ծառայությունների որ տեսակներն են ավելի համապատասխանում ջրօգտագործման կարիքներին, վճարունակությանը և ենթակառուցվածքը կառավարելուն և պահպանելուն:
- Հողագործության, անասունների գլխաքանակի, ձկնորսական տարածքների և փոքրածավալ արդյունաբերության զարգացման համար ինչ լրացուցիչ տարրեր են անհրաժեշտ, որպեսզի մարդիկ ջրային ռեսուրսներից առավելագույնս օգտվեն:

Ջրի սակավությանը և ջրային ռեսուրսների բաշխման համար մրցակցությանն առնչվող՝

- Ինչպես արդյունավետ տեղաբաշխել ջուրը:
- Ինչպես բարձրացնել ջրի արդյունավետությունը և խթանել ջրի պահանջարկի կառավարումը:
- Որն է ոչ պայմանական ջրային ռեսուրսները զարգացնելու ներուժը:

Կանանց կարգավիճակի բարելավմանն առնչվող՝

- Ինչպես հնարավորություն ընձեռել մարդկանց՝ օգտվելու խմելու և կենցաղային օգտագործման որակյալ ջրից:
- Շահութաբեր ինչ գործունեություն են ծավալում կանայք, որն ունի ջրի պահանջարկ:
- Իրականում ինչպես ամրագրել ջրային ռեսուրսների նկատմամբ կանանց ունեցած իրավունքը:
- Ջրային ռեսուրսների մասին երկխոսություններում ինչպիսի մոտե-

ցում պետք է որդեգրվի՝ համոզելու կանանց, որ նրանց տեսակետները և կարիքները լսելի են:
- Ինչպես ներգրավել կանանց որոշումներ ընդունող կառույցներում:

էկոհամակարգերի պահպանությանն առնչվող՝
- Ինչպես ապահովել ջրային ռեսուրսների էկոլոգիական հոսքը:
- Ինչպես կառավարել ջրային ռեսուրսները ապահովելու համար էկոհամակարգի պահանջներն ըստ մատակարարման ռեժիմի, ջրի որակի և քանակի:
- Փոխզիջումները գնահատելիս ինչպես արժևորել էկոհամակարգերի արտադրանքը և ծառայությունները:
- Ինչպես նվազեցնել ջրի աղտոտվածությունը:
- Ինչպես է խմելու ջրի կառավարումը ազդում ափամերձ և ծովային էկոհամակարգերի վրա:
- Ինչպես որոշել ցամաքային էկոհամակարգերի ազդեցությունը ջրային հաշվեկշռի վրա:
- Ինչպես ապահովել ստորերկրյա ջրերի և հովիտների կայուն օգտագործումը:

Մարդկանց առողջությանն առնչվող՝
- Ինչպես կարող է ջրային ռեսուրսների զարգացման ու կառավարման բարելավումը նվազեցնել ջրային ռեսուրսներին առնչվող հիվանդությունները (մալարիա, շիստոզոմոզ, փորլուծություն):
- Որոնք են սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման տարբերակները քաղաքային և գյուղական վայրերում:
- Ինչպես ջրային ռեսուրսները և ջրահեռացման խնդիրը զուգակցել հիգիենան պահպանելու ուսուցողական ծրագրերին:
- Որոնք են ամենակարիքավոր հանրությանը կայուն ջրամատակարման և ջրահեռացման ծառայություններ մատուցելու տարբերակները:

Տնտեսական զարգացմանն առնչվող՝
- Որ տնտեսական գործունեությունները են ազդում ջրային ռեսուրսների քանակի և որակի վրա:
- Ինչպես բաշխել ջրային ռեսուրսները ոլորտների միջև, որպեսզի դրանք խթանեն տնտեսական զարգացումը՝ միաժամանակ նպաստելով չքավորության նվազեցմանը և շրջակա միջավայրի կայունությանը:
- Ինչպես ստեղծել ջրային ռեսուրսների ճիշտ կառավարմանն օժանդակող մակրոտնտեսական միջավայր:

ՔԱՅԼԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՎԵԼԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Հենց որ երկիրը որոշում է, թե ինչ ուղղությամբ է ցանկանում շարժվել (նպատակներ, պայմաններ), ապա հաջորդ քայլը պետք է լինի դրան հասնելու ուղիները սահմանելը, օգտագործելով Շրջանակ 3-ում նշված ՋՌՀԿ նպատակաուղղված փոփոխությունները (էջ 12): Քաղաքական, կառուցվածքային և գործնական ինչ փոփոխություններ են անհրաժեշտ՝ համապարփակ լուծումներ, կայուն կառավարում և ավելի բարենպաստ որոշումներ ապահովելու համար: Սա նշանակում է փնտրել համապատասխան պայմաններ, կառուցվածքային դերեր և կառավարման միջոցներ:
Մինչ առանձնահատուկ փոփոխությունների անհրաժեշտությունը տարբեր է երկրներում՝ կախված շրջանակի ընթացիկ ղեկավարումից և իրականացվող նպատակներից, երկրների մեծ մասը գտնում է, որ գոյություն ունի 2 հիմնական հարց, որոնց պետք է անդրադառնալ. 1) Ինչպե՞ս նպաստել տնտեսության տարբեր ոլորտների հետաքրքրությունները հաշվի առնող համակարգված որոշումներ ընդունելուն, 2) Ինչպե՞ս բարելավել տարբեր մակարդակներում որոշումներ ընդունողների՝ ջրօգտագործողների, ջրային ռեսուրսների կառավարման տեղական, ավազանային և ազգային մարմինների փոխհարաբերությունները:

ՋՌՀԿ փոփոխությունների շրջանակներ

Ջրային ռեսուրսները կայուն և համապարփակ մոտեցմամբ կառավարելու և զարգացնելու որոշում ընդունելը պահանջում է տարբեր փոփոխություններ բազմաթիվ ոլորտներում: Եվ չնայած խնդրի բարդությանը՝ կարևոր է հիշել, որ աստիճանական բարեփոխումները կհանգեցնեն ավելի կայուն արդյունքների, քան համակարգը միանգամից և ամբողջությամբ վերափոխելու փորձը:
Բարեփոխման գործընթացը սկսելիս հարկ է հաշվի առնել՝

- Ինչ փոփոխություններ *պետք է* արվեն փոխհամաձայնության նպատակները իրականացնելու համար:
- Ընթացիկ սոցիալական, քաղաքական և տնտեսական իրավիճակում որտեղ պետք է արվեն հնարավոր վերափոխումները:
- Որն է վերափոխման տրամաբանական արդյունքը: Ինչ առաջնահերթ վերափոխումներ պետք է արվեն՝ այլ փոփոխությունների նախադրյալներ ստեղծելու համար:

ԳՋՀ-ի ՋՌՀԿ (Tool Box)-ը առաջարկում է 13 վերափոխման ոլորտներից ամեն մեկին առնչվող միջոցներ և ուսումնասիրություններ, բայց որպեսզի դրանք արդյունավետ լինեն, պետք է հարմարացվեն տվյալ երկրի սոցիալական, քաղաքական և տնտեսական իրավիճակներին:

Պայմանների ստեղծում: Պատշաճ պայմաններ ստեղծելը երաշխավորում է շահագրգիռ կողմերի իրավունքներն ու բոլոր կողմերի ակտիվները (անհատների, պետական և մասնավոր կազմակերպությունների, տղամարդկանց և կանանց, ապահով և չքավոր խավերի)՝ պահպանելով հասարակական արժեքները, ինչպիսին է, օրինակ, շրջակա միջավայրը:
Հիմնականում շրջակա միջավայրի բարեկեցիկ լինելը որոշում են ազգային, մարզային, տեղի քաղաքականությունն ու օրենսդիր մարմինները, որոնք, թելադրելով «խաղի կանոններ», հնարավորություն են ընձեռում բոլոր հետաքրքրվող կողմերին իրենց կարևոր դերը կատարելու ջրային ռեսուրսների զարգացման և կառավարման հարցում: Նրանք նաև ապահովում են ազատ բանավեճերի պայմաններ և մեխանիզմներ՝ այդ «խաղի կանոններ»-ը ստեղծելու և շահագրգիռ կողմերի մասնակցությունը ապահովելու համար:

Վերևից ներքև: ՋՌՀԿ մոտեցման շրջանակներում ջրային ռեսուրսների արդյունավետ և կայուն կառավարման հասնելու համար անհրաժեշտ է հիմնական կառուցվածքային փոփոխություն: Հարկ է աջակցել «վերևից ներքև» և «ներքևից վերև» բոլոր շահագրգիռ

կողմերի մասնակցությանը (ազգայինից մինչ ջրահավաք ավազանի կամ ջրաբաշխիչի մակարդակ): Որոշումներ կայացնելիս պետք է առաջնորդվել փոխաջակցության սկզբունքով, որն էլ հնարավորություն է տալիս ամենացածր ընդունելի մակարդակում շահագրգիռ կողմերի մասնակիցություն:

Ընկերություններից դեպի համայնք: Ի լրումն կառավարական գործակալությունների և մասնավոր ընկերությունների՝ ջրային ռեսուրսների զարգացումն ու կառավարումը պետք է ներառի հասարակական և համայնքային կազմակերպություններ, որոնք լիարժեք ներկայացնում են կանանց, բնակչության խոցելի և քաղաքացիական հասարակության այլ խմբեր: Բոլոր այս կազմակերպություններն ու գործակալությունները շատ կարևոր դեր ունեն ջրային ռեսուրսների հասանելիությունը ապահովելու, բնության պահպանության և տնտեսական զարգացման հավասարակշռությունը ապահովելու և ջուրը որպես սոցիալական և տնտեսական ապրանք գնահատելու հարցում:

Նախատեսվող բարեփոխումների ոլորտներ՝

- *Քաղաքականություն.* ջրային ռեսուրսներն օգտագործելու, պաշտպանելու և պահպանելու նպատակների մշակում: Քաղաքականության մշակումը հնարավորություն է ընձեռում առաջադրելու ազգային նպատակներ՝ զարգացման ընդհանուր նպատակների շրջանակում ջրային ռեսուրսները կառավարելու և ջրատնտեսական ծառայություններ ապահովելու բնագավառում:
- *Օրենսդրություն.* կանոններ, որոնց պետք է հետևել քաղաքականության և նպատակներին հասնելու համար: Առնչվող օրենքները վերաբերում են ջրային ռեսուրսների սեփականության իրավունքին, օգտագործման (կամ աղտոտման) թույլտվությանը, այդ իրավունքի փոխանցմանը և այլ իրավունքների: Օրենքները նաև կարգավորող նորմերի հիմք են, օրինակ՝ պաշտպանություն, պահպանություն, առաջնայնությունների և հակասությունների կառավարում:
- *Ֆինանսավորող և խթանող համակարգեր.* ջրային ռեսուրսների պահանջներին համապատասխան ֆինանսական ռեսուրսների բաշխում: Ջրային ծրագրերը սովորաբար ծավալուն են և ծախսատար, և շատ երկրներ հետ են մնում ենթակառուցվածքները զարգացնելու գործընթացում: Զարգացման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ են խելամիտ ֆինանսական մոտեցումներ և համապատասխան ազդակներ:

Կառուցվածքային դերեր: Կառուցվածքային զարգացումը քննադաբար է մոտենում ՋՌՀԿ քաղաքականության ու ծրագրերի ձևավորմանը ու իրականացմանը: Մի շարք գործոններ որոշում են, թե որն է ընդունելի տվյալ համատեքստում. զարգացման աստիճան, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, ավանդական նորմեր և այլ հատուկ պայմաններ, որոնք բոլորն էլ ունեն իրենց դերը: Գործընթացի մասնակիցների պարտականությունների կոպիտ տարանջատումը, համակարգման ոչ համարժեք մեխանիզմները, իրավական ոլորտի սխալներն ու խնդիրները, պատասխանատվությունների և իրավասությունների խախտումները, գործելու առկա հնարավորությունները ՋՌՀԿ մոտեցումն ընդունելու դժվարություններ են ստեղծում: Ջրային ռեսուրսների կառավարման մեջ ընդգրկված կազմակերպությունները պետք է դիտարկվեն ըստ նրանց տարբեր աշխարհագրական դիրքի՝ հաշվի առնելով երկրի քաղաքական կառուցվածքը, ավազանում ռեսուրսների միասնությունը, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների առկայությունն ու հզորությունը: Կառուցվածքային զարգացումը պարզապես ձևական կազմակերպություններ (օրինակ՝ շահագործող ծառայություններ, ղեկավար կամ խորհրդատվական կոմիտեներ) ստեղծելը չէ: Այս գործընթացը ընդգրկում է նաև մի ամբողջ շարք պաշտոնական կանոններ ու կարգեր, ավանդույթներ ու փորձ, գաղափարներ ու տեղեկություններ, հետաքրքրություններ կամ համայնքային խմբերի ցանցեր, որոնք միասին ձևավորում են կառուցվածքային շրջանակներ կամ համատեքստ, որոնցում էլ գործում են ջրային ռեսուրսների կառավարում իրականացնողներն ու այլ որոշումներ կայացնողները:

Համակարգման արդյունավետ մեխանիզմների կարևորություն: Հիմնական խնդիրը տարբեր գործակալությունների միջև համակարգման արդյունավետ մեխանիզմ ստեղծելն է: Կազմակերպչական համախմբման իմաստով ինտեգրումը ինքնըստինքյան չի հանգեցնում համագործակցության և համակարգման կամ ջրային ռեսուրսների ավելի արդյունավետ կառավարման: Մասնատվածությունը կամ պարտականությունների բաժանումը իրականություն են և, հավանաբար, միշտ էլ առկա են լինելու: Բազմաթիվ օրինակներ կան, որոնցում գործառույթներն ու պարտականությունները միահյուսվել են առանց նշանակալից համակարգման: Կան նաև օրինակներ, երբ արդյունավետ համակարգող մեխանիզմները խնդիրները լուծելու լավ հնարավորություն են ընձեռել, չնայած ընդգրկված են եղել մի քանի կազմակերպությունների գործառույթներում: Ջրային բոլոր գործառույթների հասարակ փոխադրումը մեկ գործակալություն դեռևս չի կարող վերացնել շահերի բախումը և կարող է հանգեցնել գործունեության թափանցիկության կորստի:

Նախատեսվող բարեփոխումների ոլորտներ՝

- *Կազմակերպչական շրջանակի ստեղծում.* ձևեր և գործառույթներ: Սկսելով ջրային ռեսուրսները լավ կառավարելու համար կազմակերպության բարեփոխումների հայեցակարգի իրականացումը՝ անհրաժեշտ է դիտարկել պահանջվող կազմակերպությունների ու հիմնարկների կառուցվածքը՝ անդրսահմանայինից մինչև ավազանային մակարդակ, կարգավորող մարմիններից մինչև տեղական կառավարման մարմիններ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ:
- *Կառուցվածքային հզորությունների ստեղծում.* մարդկային ռեսուրսների զարգացում: Սա ներառում է քաղաքական որոշումներ ընդունողների, ջրատնտեսական համակարգերը ղեկավարողների և տնտեսության բոլոր բնագավառների մասնագետների մասնագիտական որակավորման և խնդիրը հասկանալու մակարդակի բարձրացում, նյութատեխնիկական հենքի ստեղծում, կարգավորող մարմիններում մասնագետների որակավորման բարձրացում, ինչպես նաև հասարակական խմբերի իրավասությունների ամրապնդում:

Կառավարման գործիքներ: Կառավարման գործիքները այն մեթոդներն ու տարրերն են, որոնք օգնում են որոշում կայացնողներին այլընտրանքային տարբերակներից ընտրելու ամենառացիոնալը: Այս որոշումները պետք է հիմնվեն փոխհամաձայնությունների, հասանելի ռեսուրսների, շրջակա միջավայրի վրա ազդեցությունների և սոցիալ-տնտեսական հետևանքների վրա: Համակարգված վերլուծությունները, աշխատանքային ուսումնասիրությունները և կառավարման տեսությունը առաջարկում են քանակական և որակական մեթոդների լայն ընտրանի: Այս մեթոդները տնտեսական, հիդրոլոգիական, հիդրավլիկական, էկոլոգիական, սոցիոլոգիական և հիմնախնդրին առնչվող այլ բնագավառների գիտելիքների հետ միասին օգնում են որոշելու և գնահատելու ջրային ռեսուրսների կառավարման այլընտրանքային տարբերակները և իրագործման սխեմաները: ՋՌՀԿ-ի արվեստը անհրաժեշտ և առկա տարրերի ու մեթոդների իմացությունն է, դրանց ընտրությունը, համապատասխանեցումն ու տվյալ իրավիճակում դրանց համատեղ օգտագործումը:

Նախատեսվող բարեփոխումների ոլորտներ՝

- *Ջրային ռեսուրսների գնահատում.* ջրային ռեսուրսների իրավիճակի ու ջրօգտագործման կարիքների մասին տեղեկատվություն: Այս դրույթը ներառում է հիդրոլոգիական, ֆիզիկաաշխարհագրական, դեմոգրաֆիկ և սոցիալ-տնտեսական տվյալների ամրագրում՝ տվյալները պարբերաբար հավաքելու համակարգ ստեղծելու և հաշվետվություններ կազմելու միջոցով:
- *Պլանավորում.* զարգացման տարբերակների միավորում, ռեսուրսների օգտագործում և մարդկանց միջամտություն: Ջրային ավազանների պլանավորումը պահանջում է տվյալների հավաքում առկա բոլոր աղբյուրներից և մոդելավորում: Պլանավորման ընթացքում պետք է հաշվի առնել սոցիալական, տնտեսա-

Գործընթացի մասնակիցների պարտականությունների կոպիտ տարանջատումը, համակարգման ոչ համարժեք մեխանիզմները, իրավական ոլորտի սխալներն ու խնդիրները, պատասխանատվությունների և իրավասությունների խախտումները, գործելու համար առկա հնարավորությունները ՋՌՀԿ մոտեցումն ընդունելու դժվարություններ են ստեղծում:

Շրջանակ 5. Կառույցների բարեփոխում՝ լավագույն կառավարում ապահովելու համար

Կառավարման մոդելները պետք է համապատասխանեն երկրի սոցիալական, տնտեսական և մշակութային առանձնահատկություններին, սակայն որոշակի հիմնարար սկզբունքներ ու հատկանիշներ էական դեր ունեն: Ջրային ռեսուրսների կառավարման ընդունված մոտեցումը պետք է լինի թափանցիկ, ամբողջական, հասկանալի և արդար: Կառավարման համակարգը նույնպես պետք է լինի պատասխանատու, արդյունավետ և արձագանքի փոփոխություններին: Լավագույն կառավարումը պահանջում է կառավարության, հանրության և մասնավոր հատվածի մասնակցություն, քանի որ կառուցվածքային բարեփոխումները հաջողությամբ իրականացնելու համար բոլորն էլ յուրովի օգտակար են:
Լավագույն կառավարում ապահովելու համար կառույցները բարեփոխելիս պետք է գնահատել առկա կառուցվածքային համակարգերը՝ նախ և առաջ հասկանալու համար, թե ով ում համար ինչ է անում, ինչպես նաև, թե ով ում է պատասխանատու: Գնահատման արդյունքում պետք է որոշվի, օրինակ՝ օրենքների անհամապատասխանությունը, տարբեր լիազորություններով (տեղական, միջշրջանային, ազգային և միջազգային) կազմակերպությունների մանդատների կրկնությունը կամ հստակության պակասը: Հաջողության հասնելու համար հարկ է որոշել, թե ինչը բարեփոխել և ինչ հաջորդականությամբ:

կան և էկոլոգիական կարիքները՝ օգտագործելով գնահատման գործիքների ողջ շարքը:

- *Պահանջարկի կառավարում.* առավել արդյունավետ ջրօգտագործում: Պահանջարկի կառավարումը ներառում է առաջարկի և պահանջարկի հավասարակշռում՝ ավելի կենտրոնանալով ջրաղբյուրից վերցրած ջրի արդյունավետ օգտագործմանը կամ ավելցուկային ջրօգտագործման նվազեցմանը, բայց ոչ ջրառի ծավալների մեծացմանը:
- *Սոցիալական բարեփոխումների գործիքներ.* հասարակության՝ ջրի նկատմամբ խնայողական վերաբերմունքի խրախուսում: Ամբողջ աշխարհում տեղեկատվությունը ջրային ռեսուրսների նկատմամբ վերաբերմունքը փոխելու հզոր գործիք է: Այն իրականացվում է դպրոցական և համալսարանական, մասնագիտական և որակավորման բարձրացման կուրսերի ուսումնական ծրագրերի միջոցով: Իսկ թափանցիկությունը, հասանելիությունն ու հուսալիությունը հիմնական գործիքներն են:
- *Անհամաձայնությունների/ տարաձայնությունների հարթում.* ջրի բաշխման պատճառով ծագած վեճերի լուծում: Անհամաձայնությունները կառավարելը առանձին ուղղություն է, քանի որ ջրային ռեսուրսների կառավարման հակասական իրավիճակները շատ են աշխարհում, և դրանք լուծելու մոդելները պետք է ձեռքի տակ ունենալ:
- *Կարգավորող գործիքներ.* ջրային ռեսուրսների բաշխում և սահմանափակում: Այս համատեքստում կարգավորումը ներառում է ջրային ռեսուրսների որակը, ծառայությունների ապահովումը, ցամաքային ու ջրային ռեսուրսների պահպանումը: Կարգավորումը առաջնային է պլանների և քաղաքականության համար և կարող է արդյունավետ զուգակցվել տնտեսական միջոցներով:
- *Տնտեսական գործիքներ.* գնի և արժեքի օգտագործում արդյունավետություն և հավասարություն ապահովելու համար: Տնտեսական գործիքները ներառում են գների օգտագործում, լրահատկացումներ և շուկայական հիմունքներով այլ միջոցառումներ, որոնք մղում են ջրօգտագործողներին ջրային ռեսուրսները ավելի խնայողաբար և արդյունավետ օգտագործել՝ խուսափելով աղտոտումից:
- *Տեղեկատվության կառավարում և փոխանակում.* ջրային ռեսուրսների կառավարման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները հեշտացնում են շահագրգիռ կողմերի՝ տվյալների պետական բազայում պահպանվող տեղեկատվությունից օգտվելը և արդյունավետ համալրում հանրային տեղեկատվության ավանդական ձևերը:

Բնագավառների և մասշտաբների փոխկապացում

Կան բազմաթիվ կազմակերպություններ, որոնց առաջնային գործառույթը ջրային ռեսուրսները կառավարելը չէ, սակայն նրանք պատասխանատու են այնպիսի բնագավառների համար (օրինակ՝ գյուղատնտեսություն, արդյունաբերություն, առևտուր և էներգետիկա), որոնք կախված են ջրային ռեսուրսներից և մեծ ազդեցություն ունեն դրանց վրա: Նույն ձևով ջրային ռեսուրսների գործակալությունները պետք է հաշվի առնեն այնպիսի խնդիրներ, ինչպիսին են շրջակա միջավայրը և զբոսաշրջությունը, որոնք այլ գործակալությունների իրավասության ներքո են: Կառուցվածքային սխեման փոխվում է երկրից երկիր, սակայն որքան էլ այն առանձնահատուկ լինի, անհրաժեշտ են երկխոսության և համակարգման մեխանիզմներ՝ ապահովելու համար ինտեգրման որոշակի մակարդակ: Պետք է ապահովել համապարփակ (երբ փորձի կամ հետաքրքրվածության բացակայության պատճառով որոշ հիմնախնդիրներ կարող են բաց թողնվել) և բնագավառային (երբ տարբեր քաղաքականություններ իրագործվում են առանց այլ ոլորտների կարիքները և դրանց վրա ազդեցությունները հաշվի առնելու) մոտեցումների հավասարակշռություն:

Որոշ առումով հենց ռազմավարություն մշակելու ամբողջական գործընթացը պետք է միավորի ջրային ռեսուրսներին առնչվող բնագավառները և ձեռնարկի պաշտոնական կապեր հաստատելու ռազմավարություն: Միևնույն ժամանակ կարևոր է, որ ռազմավարությունը հստակ նկարագրի ջրային ռեսուրսներին առնչվող բնագավառներում որոշումներ կայացնելու գործընթացների կապերը: Ընդհանուր աջակցության ժամանակ օգտակար է, որ ռազմավարությունը ցուցադրի, թե բարեփոխումները ինչպես կարող են օժանդակել ջրային ռեսուրսներին առնչվող հիմնական խնդիրների իրականացմանը:

Որոշ դեպքերում երկրները ստեղծել են նոր կազմակերպություններ կամ լիովին փոխել գոյություն ունեցողների մանդատները. որպես ՋՌՀԿ ներդրման մասնակի բարեփոխում՝ վերգերատեսչական մարմիններն ու ավազանային կազմակերպությունները առավել տարածված օրինակներն են: Այսպիսի մարմիններ հիմնելու պատճառ է ջրային ռեսուրսների և դրանց առնչվող խնդիրների (հողային ռեսուրսների կառավարում, միջբնագավառային մակարդակում որոշումների կայացում և օգտագործողների ակտիվ մասնակցությամբ ռեսուրսների արդյունավետ կառավարում) համակարգված գործունեությանը աջակցելը:

Ինչևէ, փորձը ցույց է տալիս, որ միայն վերգերատեսչական մարմինների ու ավազանային կազմակերպությունների ստեղծումը չի կարող երաշխավորել ՋՌՀԿ մոտեցումը. դրանք պետք է աջակցվեն համապատասխան քաղաքականությամբ, օրենսդրական հենքով և նյութատնտեսական միջոցներով: Հակառակ դեպքում այդպիսի մարմինները չեն կարող ապահովել ՋՌՀԿ մոտեցումը: Այլ տարբերակներ են ջրային բնագավառում գոյություն ունեցող գերատեսչական կազմակերպությունների գործառույթները համակարգելը կամ ջրային ռեսուրսների կառավարման գործառույթը հանձնելը բնական ռեսուրսների կառավարման ընդլայնված գործառույթ ունեցող կազմակերպության: Օրինակ՝ Վիետնամում ջրային ռեսուրսների կառավարմամբ զբաղվում է տեղի Բնական ռեսուրսների և միջավայրի նախարարությունը:

Սույն բաժինը կենտրոնանում է տեղեկատվություն տարածող և գործունեություն համակարգող կազմակերպություններին: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ կազմակերպչական այլ տիպեր (օրինակ՝ շուկայականը) նույնպես կարող է տեղեկություն մատակարարել օգտագործողներին և ազդել նրանց հետագա գործելակերպի վրա (դրամական օժանդակության և շուկայական իրավունքների արժևորումը նույնպես կարող է դեր խաղալ):

Վերգերատեսչական մարմիններ

Վերգերատեսչական մարմինները կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներից կազմված համակարգող կոմիտեներն են, հատուկ խնդիրների լուծման համար ստեղծված միջբնագավառային (օրինակ՝ ջրային ռեսուրսների աղտոտումը հսկելու համար) և ջրային ռեսուրսների կառավարման միջազգային հանձնաժողովները:

Համակարգումը խրախուսելու համար: Այսպիսի մարմին ստեղծելու նպատակը ջրային ռեսուրսների կառավարմամբ

... փորձը ցույց է տալիս, որ միայն վերգերատեսչական մարմինների ու ավազանային կազմակերպությունների ստեղծումը չի կարող երաշխավորել ՋՌՀԿ մոտեցումը, դրանք պետք է աջակցվեն համաատասխան քաղաքականությամբ, օրենսդրական հենքով և նյութատնտեսական միջոցներով:

զբաղվող տարբեր կազմակերպությունների միջև համակարգում ապահովելն է: Որոշ դեպքերում ջրային քաղաքականություն վարելը և կառավարելը կենտրոնացված է կառավարության հատուկ մարմնում, սակայն շատ դեպքերում ջրային ռեսուրսների համար պատասխանատվություն է կրում մի քանի մարմին (օրինակ՝ ոռոգման, շրջակա միջավայրի և հասարակական ենթակառույցների նախարարություններ), որոնց համագործակցությունը երբեմն չի հաջողվում: Այս դեպքում վերգերատեսչական մարմինը կարող է ապահովել անհրաժեշտ համակարգող գործառույթներ:

«Խոշորացված պատկերի» մոտեցման խրախուսում ջրային ոլորտում որոշում կայացնելիս: Վերգերատեսչական մարմիններ ստեղծելը կարող է ջրային ռեսուրսների բաշխմանն առնչվող որոշումները զերծ պահել միայն մեկ ոլորտի շահերից՝ խթանելով դրա ավելի ռազմավարական բաշխումը: Կամ էլ այդ մարմինները կարող են այնպիսի բարեփոխումներ իրականացնել, որոնք ամբողջությամբ չեն համապատասխանում կայուն զարգացման պահանջներին, սակայն կարող են հակազդել որևէ բնագավառի քաղաքական հետաքրքրություններին: Մեխիկոյում Շրջակա միջավայրի նախարարությանը կից Ջրի ազգային հանձնաժողով (ՋԱՀ) հիմնելիս պարզվեց, որ վերջինս այն հիմնական մարմիններից է, որոնք առնչվում են երկրի ստորերկրյա ջրերի անկայուն օգտագործմանը: ՋԱՀ-ը ի վիճակի չէր լինի իրականացնելու ստորերկրյա ջրերի պահանջվող բարեփոխումներից շատերը, եթե իրավասություն չունենար դուրս գալ նահանգների սահմանից և անկախ չլիներ ընտրական իրավունք ունեցող ազդեցիկ ագարակատերերի հզոր խմբից[9]:

ՋՌՀԿ (Tool Box)-ի օգնությամբ վերգերատեսչական մարմիններ ստեղծելու դասեր

- Ներկայումս ազդեցիկ և հարգված վերգերատեսչական մարմինների բարեհաջող գործունեության մասին տվյալները սահմանափակ են:
- Հաջողված վերգերատեսչական կամ համակարգող մարմին հիմնելը կարող է դանդաղ գործընթաց լինել, քանի որ նոր մարմնի օրինական դառնալը ժամանակ է պահանջում:
- Վերգերատեսչական մարմնի աշխատանքի արդյունավետությունը առընչվում է որոշակի քաղաքական և պատմական պայմանների:
- Որպեսզի վերգերատեսչական մարմինը արդյունավետ գործի, դրա ենթակայության ներքո գտնվող բոլոր շահագրգիռ կողմերը պետք է կատարեն իրենց պարտականությունները և նրան փոխանցեն համապատասխան իրավասություններ: Այստեղ խիստ կարևոր են հակասությունները հարթելու ու իրազեկությունը ընդլայնելու մեթոդները:

Գետավազանային կազմակերպություններ:
Գետավազանային կազմակերպությունները զբաղվում են գետավազանի, լճի ջրահավաք ավազանի կամ ջրային տարածքների (մակերևութային և ստորերկրյա) ջրային ռեսուրսների կառավարման խնդիրներով: Նրանք կարող են օգտակար լինել հաղթահարելու երկրի վարչական, ինչպես նաև ազգային սահմանները: Գետավազանային կազմակերպությունները մեխանիզմներ են ապահովում, որոնք երաշխավորում են, որ հողօգտագործման հարցերը հաշվի են առնվում ջրային ռեսուրսները կառավարելու ժամանակ և հակառակը: Նրանց իրավասությունը տարածվում է ջրային ռեսուրսների բաշխման, ջրային ռեսուրսների կառավարման և պլանավորման գործառույթից մինչև ավազանի համայնքների ուսուցում, բնական ռեսուրսների կառավարման ռազմավարություններ և վնասված հողերի և ջրուղիների վերականգնման ծրագրեր: Դրանք կարող են կարևոր դեր ունենալ նաև հակասությունները կառավարելիս և փոխհամաձայնությունների հասնելիս:

Գերատեսչական, շրջանային և պետական սահմաններ հաղթահարող համապարփակ կառավարում ապահովելու համար: Բարենպաստ աշխատանքի դեպքում գետավազանային կազմակերպությունները կարող են ապահովել համապարփակ կառավարում միջբնագավառային և միջպետական մակարդակով: Թեննեսիի

[9] *Տե՛ս Սքոթ Ք. Ա. և Շահ Թ. 2004թ. Գյուղատնտեսական էներգիայի քաղաքականության միջոցով գրունտային ջրերի գերօգտագործման նվազեցում. Հնդկաստանից և Մեքսիկայից քաղվածքներ: Ջրային ռեսուրսների զարգացման միջազգային ամսագիր, թիվ 20(2), էջ 149 – 164:*

հարթավայրի կառավարման մարմինները (ԹՀԿՄ) հաջողված ավազանային կազմակերպության ամենահայտնի օրինակներից են: ԹՀԿՄ-ն պատասխանատու է Թեննեսիի գետավազանում (որն ունի 106,000կմ^2 մակերես և միացնում է յոթ նահանգներ) ջրային ռեսուրսների կառավարմանն առնչվող մի շարք հարցերի (ջրհեղեղների ռիսկի նվազեցում, նավարկության ապահովում, բնակչության հանգստի պայմանների ստեղծում, Թեննեսիի գետավազանի սահմաններում էլեկտրաէներգիայի արտադրություն) համար:
Մալազիայում ջրատնտեսական մի շարք խնդիրների հաղթահարումը անհաջողության մատնվեց՝ պայմանավորված ջրային ռեսուրսների կառավարման ու տեղաբաշխման հարցերում կառավարության անզորությամբ, քանի որ այդ գործառույթները առանձին նահանգների իրավասության ներքո էին[10]: Այս խնդիրը լուծելու համար երկիրն ընդունել է պետական և նահանգային սահմանները հաղթահարող ավազանային կազմակերպության ստեղծմանն աջակցող ջրային օրենսդրություն:

Ավելի մասնակցային կառավարում խրախուսելու համար: Գետավազանի կամ ջրահավաք ավազանի գործակալությունները կարող են ծառայել նաև որպես ազգային պլանավորման և տեղական մակարդակով որոշումներ ընդունող մեխանիզմները շաղկապող օղակ: Հարավային Աֆրիկայում շրջակա միջավայրի էկոլոգիական պահանջները բավարարելու համար անհրաժեշտ ջրի նվազագույն քանակը սահմանվում է ազգային մակարդակով, իսկ ավազանային կազմակերպությունները ջրօգտագործողների հետ աշխատելիս պայմանավորվում են էկոլոգիական թողքերի մասին՝ ելնելով սահմանված նվազագույն քանակից:
Թաիլանդը գետավազանային կազմակերպություններ ստեղծելը օգտագործեց ջրային ռեսուրսների կառավարման մեթոդները տեղական պայմաններին հարմարեցնելու նպատակով[11]: Թաիլանդի՝ զարգացման որոշակի փուլում ջրային ռեսուրսների կառավարումը դարձել էր խիստ կենտրոնացված՝ ստեղծելով լուրջ հակասություններ տնտեսության ճյուղերի և ջրօգտագործողների միջև: Ցանկանալով լուծել դրանք և կառավարման ավելի ընդգրկուն գործընթաց զարգացնելով՝ երկիրը ստեղծեց գետավազանային կոմիտեներ՝ ջրօգտագործողների ընդլայնված մասնակցությամբ:

Ավազանային կազմակերպությունների ծախսողումներ: Կան նաև չկայացած գետավազանային կազմակերպությունների բազմաթիվ օրինակներ, ինչպես Չինաստանը, որը 1950 - ական թվականներին ստեղծեց ավազանային կառավարման կոմիտեներ հիդրոէներգիայի արտադրությունը կառավարելու, ջրհեղեղների դեմ պայքարելու և նավարկություն ապահովելու նպատակով: Արդյունքում կոմիտեներն ուշադրությունը կենտրոնացրին միայն ոռոգման վրա: Հնդկաստանում Դամոդար հարթավայրի կառավարման մարմինները փորձեցին տեղայնացնել Թեննեսիի մոդելը և անհաջողության մատնվեցին լայն գործառույթներ ունենալու պատճառով և չորս տասնամյակ անց զբաղվում են միայն ջերմային էլեկտրակայաններով: Որոշ հարցեր ծագեցին՝ արդյոք ավազանային կազմակերպությունները ի վիճակի են անդրադառնալ երկրի ավազանների զարգացման գերակա խնդիրներին, հատկապես քիչ ջուր օգտագործողների մեծ բանակին, ովքեր ջուր ստանում են առանց հասարակական գործակալությունների կամ ջրային ծառայությունները կարգավորող մատակարարների միջնորդության[12]:

Գետավազանային կառավարման հաջողված կազմակերպությունների հիմնական բնութագրիչները (ՋՌՀԿ-Tool Box)

- Որակյալ տեխնիկական հզորություններ ստեղծելու ունակություն:
- Կենտրոնացում հեղեղների, երաշտի կամ ջրամատակարարման սակավության պարբերաբար կրկնվող նմանա-

[10] *Ազգային ջրային ռեսուրսների քաղաքականություն և օրենսդրություն. մալազիացի Լոու Քվեյ Սիմի առաջարկած ՋՌՀԿ(Tool Box)- ի քննարկման առարկան:*

[11] *ԳՋՀ ՋՌՀԿ (Tool Box) Թաիլանդի գետավազանի կոմիտեի ապակենտրոնացումը կամ զարգացումը, գործ # 186:*

[12] *Տե՛ս Շահ Թ., Մակին, Ի., Սակտիվադիվել Ռ., 2002թ. Օրգանական սահմաններ – «Զարգացող աշխարհում գետավազանային կառավարման գործուն կառույցներ ստեղծելու խնդիրներ» գետավազանային միջոլորտային կառավարման մեջ, Կոլոմբո - Միջազգային ջրային ռեսուրսների կառավարման ինստիտուտ:*

տիպ խնդիրներին և բոլոր շահագրգիռ կողմերի ընդունելի որոշումներ:

- Մեծ թվով շահագրգիռ կողմերի ընդգրկվածություն՝ ապահովելով ներքին օղակների մասնակցությունը ջրավազանային մակարդակով (ջրին առնչվող ֆորումներ) որոշումներ ընդունելուն:
- Ջրի դիմաց վարձավճարներ հավաքելու, դրամաշնորհներ կամ վարկեր ստանալու կարողություն:
- Գործունեության հստակ սահմաններ և համապատասխան լիազորություններ:

Շրջանակ 6. Ինչպես պետք է ռազմավարությունը անդրադառնա անդրսահմանային խնդիրներին

Ամեն երկիր ազգային մակարդակով մշակում է իր ռազմավարությունները: Այդ ամենի հետ մեկտեղ պետք է հաշվի առնվի անդրսահմանային ջրօգտագործումը, հատկապես այն վայրերում, որտեղ տարբեր ջրօգտագործողների հակասությունների զգալի ներուժ կարող է լինել: Երկրագնդի հողային ռեսուրսների գրեթե կեսը գտնվում է անդրսահմանային գետավազաններում: Այսպիսի անդրսահմանային համակարգերի համագործակցության մասին շատ համաձայնագրեր են ստորագրվել (օրինակ՝ Մեկոնգի ավազանում) կամ պատրաստվում են (ինչպես Նեղոսի ավազանում): Երկրների միջև այս համաձայնագրերը կնքվում են տարածաշրջանային մակարդակով, սակայն պահանջում են քաղաքական փոփոխություններ և բարեփոխումներ ազգային մակարդակով:

Ռազմավարության նախապատրաստումը ապահովում է ջրօգտագործման տարբեր բնագավառների, հնարավոր հակասությունների, ինչպես նաև ջրային ռեսուրսների կայունության վերաբերյալ համակարգված որոշումներ ընդունելու հնարավորություն: Անդրսահմանային կազմակերպություն կամ գետավազանային հանձնաժողով ձևավորելը ապահովում է պլանավորման համակարգում: Անդրսահմանային համակարգումը կարող է համագործակցելու, գետային հոսքի սահմաններից դուրս շահույթ ստանալու հնարավորություն ընձեռել սահմանամերձ երկրներին:

ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Այս բաժինն անդրադառնում է ռազմավարություն մշակելու գործընթացը կառավարող հիմնական միջոցներին. դերեր և գործառույթներ, շահագրգիռ կողմերին ներգրավելու շրջանակ, գիտելիքների հիմքի ստեղծում, հիմնական իրադարձությունների՝ փուլերի և չափորոշիչների սահմանում և, ի վերջո, մոնիթորինգի և գնահատման մեխանիզմների վերականգնում:

Պլանի և ռազմավարության տարբերությունը

Պլանավորումն ու ռազմավարությունը սերտորեն փոխկապակցված են: Սակայն մինչ պլանավորում ասելով՝ հասկանում են որոշակի գործողություններ, ռազմավարությունը ավելի շատ կենտրոնացած է հետագա ուղիները որոշելուն: Ռազմավարությունը որոշում է նպատակները և համակարգում այդ նպատակներին հասնելու ուղիները, նույնիսկ նկարագրում է չնախատեսված հիմնախնդիրները լուծելու հնարավորությունների սահմանները: Այնուհետև պլանավորումը ընտրված ռազմավարությունը վեր է ածում որոշակի խնդիրների, գործողությունների և հարակից միջոցների: Ներքոհիշյալ աղյուսակն ընդգրկում է պլանավորման և ռազմավարության առկա հիմնական տարբերությունները:

Պատասխանատվությունների որոշում

Երկրի դերերը և պարտականությունները որոշելու խնդիրը մեծ մասամբ կախված է որոշակի իրավիճակից, պլանավորման շրջանակից և որոշումներ կայացնող կառույցից: Որոշ երկրներ ունեն ընդունված որոշակի պլանավորման ընթացքներ, մինչ մյուսները ջրային ռեսուրսների պլանավորման պատասխանատվությունները և որոշումներ կայացնելու խնդիրները հանձնում են շրջաններին կամ նահանգներին: Գոյություն չունի ճիշտ ղեկավարման մի ձև: Բայց ինչ մոդել էլ որ լինի, պետք է նախապես որոշել գործընթացի բոլոր մասնակիցների դերերն ու պատասխանատվությունները՝ միաժամանակ ստեղծելով պատասխանատվության մեխանիզմներ: Աղյուսակ 2-ում (էջ 30) նշված է դերերի և պարտականությունների հնարավոր բաշխումը:

Աղյուսակ 1. Պլանավորման և ռազմավարության առկա հիմնական տարբերությունները[13]

Ռազմավարություն	Պլանավորում
Որոշում է ուղղությունը	Ուղղությունը տրված է
Խրախուսում է նորարարությունը	Հիմնված է գոյություն ունեցող գաղափարների վրա
Գործում է տեսլականին և նպատակներին համահունչ	Գործում է ըստ նպատակների
Երկարաժամկետ է	Կարճաժամկետ է
Համադրում է	Վերլուծական է
Ուշադրության կենտրոնում են հզորացումն ու հնարավորությունները	Ուշադրության կենտրոնում է խնդիրների լուծումը (վտանգներ, թույլ կողմեր)
Հիմնված է հետագա հնարավորությունների վրա	Հիմնված է առկա միտումների վրա

[13] *Վերցված է Ռազմավարական համակարգվածությունից (SOR), MDF վերապատրաստում և խորհրդակցում, Նիդերլանդներ:*

Շրջանակ 7. Ռազմավարությունը ջրային ռեսուրսների պլանավորում չէ

ՋՌՀԿ արդյունավետ ռազմավարություն ստեղծելը, ի տարբերություն միայն ջրային ռեսուրսների օգտագործումը պլանավորող փաստաթղթի, պահանջում է այլ մոտեցումներ: Հիմնական տարբերություններն են՝

Տնտեսության մի քանի բնագավառների ներգրավվածություն: Մինչ ջրային գործակալությունը մշակում և իրականացնում է ջրային պլանը, ՋՌՀԿ ռազմավարությունը պահանջում է ջրային ռեսուրսների զարգացմանը և կառավարմանն առնչվող տնտեսության բոլոր ոլորտների (առողջապահություն, էներգետիկա, տուրիզմ, արդյունաբերություն, գյուղատնտեսություն և շրջակա միջավայր) ներգրավում և մասնակցություն:

Ավելի ծավալուն կենտրոնացում: Ջրային պլանները կենտրոնանում են սոսկ ջրամատակարարման և պահանջարկի խնդիրներին, ՋՌՀԿ ռազմավարությունը ջուրը դիտարկում է այլ տեսանկյունից՝ որպես զարգացման ավելի մեծ նպատակների հասնելու միջոց:

Շարժուն և ոչ թե վիճակագրական ռազմավարություն: Ի տարբերություն ջրային պլանի, որը նախատեսում է գործողությունների ու որոշումների հստակ հաջորդականություն, ՋՌՀԿ ռազմավարությունն ուղղված է երկարատև և հարմարվողական գործընթացի ռազմավարական ու համակարգված միջոցառումների շրջանակներ ստեղծելուն:

Շահագրգիռ կողմերի մասնակցություն: Քանի որ ՋՌՀԿ-ն բարեփոխումների և հետևաբար տարբեր մակարդակներում ընդգրկվածության կողմնակից է, ռազմավարությունը զարգացնելը շահագրգիռ կողմերից պահանջում է շատ ավելի լայնամասշտաբ մասնակցություն, քան ավանդական պլանավորման ընթացքում:

Համակարգող խմբերի ստեղծում: Որակյալ մասնագետներից կազմված միջնախարարական խմբերի կառավարումը կարող է աջակցել տնտեսական բնագավառների համատեղ ռազմավարություններ մշակելուն և բարեփոխումները տեղայնացնելուն: Գլոբալ էկոլոգիական ֆոնդի օժանդակած ծրագրերի փորձը (ինչպես աշխարհի մի շարք գետավազաններում հողային և ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման մոտեցումներ ներդնելը) ցույց է տալիս, որ ազգային միջգերատեսչական կոմիտեները կարող են ակտիվ գործունեություն ծավալել՝ ոչ միայն հաստատելով առկա պլանները և ռազմավարությունները, այլև գործնականորեն համակարգել այդ գործընթացը: Քանի որ համակարգող կոմիտեն հաջողված ռազմավարության կարևոր օղակներից է, անդամներին ընտրելիս պետք է մանրամասն գնահատել յուրաքանչյուրի ազդեցության աստիճանը և նվիրվածությունը գործընթացին: Նույն համակարգող խումբը կարող է նաև վերահսկել ռազմավարության իրագործման ընթացքը և հաշվետու լինել բարձրաստիճան ղեկավարությանը: Բարձր որակավորմամբ կառավարող թիմը պետք է ընտրվի ռազմավարության ձևավորման գործընթացի վաղ փուլում: Հենց նույն անձնակազմին ռազմավարություն զարգացնող և իրագործման ընթացքը կառավարող պատասխանատու դարձնելը նպաստում է, որ այդ ռազմավարությունը ընդունվի որպես սեփականություն և արդյունավետ իրագործվի:

Կառավարման մակարդակում դերերի և պարտականությունների բաշխում: Ռազմավարությունը պետք է խորապես ամրակցվի կառավարման տարբեր մակարդակներին (կենտրոնական, տարածաշրջանային, տեղական) և հասարակական կյանքին, որպեսզի հնարավորինս խուսափի իրականացման ընդհատումներից՝ կախված կառավարության կամ նախարարության առանցքային անձնակազմի փոփոխումից: Սրան կարելի է հասնել համակարգող ու կառավարող խմբեր ընտրելով և գործընթացին աջակցող կազմակերպությունների, ինչպես նաև ՀԿ-ների միջոցով:

Եթե ռազմավարության մշակման պատասխանատվությունը հիմնականում պետական կառույցինն է, ապա անհրաժեշտ է ստեղծել համակարգման մեխանիզմներ, որոնք կապահովեն գործընթացի ավարտը և կմշակեն ամբողջական ռազմավարություն, այլ ոչ թե որոշ չափով փոխկապակցված ռազմավարությունների շարք:

Աղյուսակ 2. Դերերի և պարտականությունների առաջարկվող բաշխում

Ազգային կառավարություն	• Գլխավոր դերակատար, ընթացքի «սեփականատեր» • Ֆինանսների մոբիլիզացում • Մակրոտնտեսական և քաղաքական միջավայրի ստեղծում
Համակարգող կոմիտե (լայն ներկայացուցչությամբ խումբ)	• Ընթացքի ղեկավարում • Բնագավառների և շահագրգիռ խմբերի աջակցության մոբիլիզացում • Որակյալ արդյունքի երաշխավորում • Իրականացման գործընթացի վերահսկում
Կառավարող անձնակազմ (որակյալ մասնագետների խումբ)	• Ռազմավարության մշակման գործընթացի ամենօրյա կառավարում, իրականացում և հզորությունների ստեղծում
Անհրաժեշտության դեպքում աջակցող կազմակերպություններ (օրինակ՝ ազգային ՀԿ-ներ, երկրի կամ տարածաշրջանի ԳՋՀ, ՄԱԿ-ի տեղական ներկայացուցչություն)	• Երկխոսությունների համար չեզոք դիրքի ստեղծում • Ռազմավարության մշակման գործընթացի աջակցություն, խորհրդատվություն և գիտելիքների փոխանակում • Առաջընթացի և ուսուցման խթանում

Շահագրգիռ կողմերի մասնակցություն

Ռազմավարության արդյունավետությունն ապահովելու համար պետք է հավասարակշռել երկու, հաճախ հակասական պահանջներ: Արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է շահագրգիռ կողմերի լայնածավալ աջակցություն: Սակայն պետք է խուսափել գործողություններ ձեռնարկելու փոխարեն անվերջանալի քննարկումների ծուղակն ընկնելուց: Այս պահանջները հավասարակշռելու բանալին տարբեր խմբերի գործընթացի համապատասխան փուլերին ժամանակին և բարենպաստ մասնակցությունն է և տարաձայնությունների լուծման մեխանիզմներ կիրառելը: Միևնույն ժամանակ պետք է ընդունել, որ ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման և զարգացման գործընթացին շահագրգիռ կողմերի աջակցությունն ու մասնակցությունը շարունակական բնույթ ունի և հեշտ չէ այն կասեցնել նախնական ռազմավարությունն իրագործելուց հետո:

Իմաստալից մասնակցության քաջալերում: Համայնքային գործընթացները պետք է աջակցեն շահագրգիռ կողմերին՝ ջրային ռեսուրսների օգտագործման և կառավարման իրատեսական պատկեր ստեղծելիս, ռազմավարության մշակման ժամանակակից մոտեցումները բացահայտելիս՝ տեղեկացնելով, թե նրանք ինչպես կարող են ներդրումներ կատարել, և այդ ներդրումները ինչպես կօգտագործվեն: Շահագրգիռ կողմերի կապը պետք է լինի երկկողմ, ինչպես «վերևից ներքև», այնպես էլ «ներքևից վերև»: Փակ դռների ետևում ընդունված որոշումների «վաճառքը» արդյունք չի տա:

Լայնածավալ գործունեության (ոչ պաշտոնական հանդիպումներ, սեմինարներ, խորհրդատվական շփումներ, հանրահավաքներ, կենտրոնացված խմբերի հետ հարցազրույցներ, քաղաքական երկխոսություններ, կլոր սեղաններ և մամլո ասուլիսներ) արդյունքում ստեղծված «մասնակցության հենքը» կարող է նպատակային օգնել տարբեր խմբերի՝ գիտակցաբար մասնակցելու ռազմավարության մշակման գործընթացին:

Այսպիսի հենքը պետք է նպաստի նպատակների, խնդիրների և գործունեությունների մանրակրկիտ ընտրությունը: Նման հենքը մտահորիզոնում պետք է ընկալվի որպես ջրային ռեսուրսներին առնչվող անհրաժեշտ, տրամաբանական, ազատ քննարկում: Առավել հավանական է, որ ռազմավարությունները հասնեն

նպատակին, եթե կանայք լինեն գործընթացի ակտիվ մասնակիցներ ու որոշումներ ընդունողներ:

Բանակցություններ և հակասությունների լուծում: Հնարավոր չէ բոլորի պահանջները բավարարել, այդ պատճառով էլ բանակցությունների և հակասությունների լուծման մեխանիզմներն այս մոտեցման բաղկացուցիչ մասն են: Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման գործընթացի մեծ մասը հակասական իրավիճակները հարթելն է: Ի վերջո, կառավարության պարտականությունը ռազմավարության ձևավորման փուլում հնարավոր հակասությունները լուծելն է: Այս փուլում անհամաձայնությունները նվազեցնող գործողությունները ամբողջովին չեն կարող վերացնել ավելի ուշ՝ ռազմավարության իրականացման փուլում առաջացած բախումները: Հետևաբար, հարկ է մշակել անհամաձայնությունները լուծելու երկարաժամկետ պաշտոնական գործընթացներ:

Ռազմավարության ձևավորման հիմնական շահագրգիռ կողմերը կարող են լինել.

- Նախարարություններ և ազգային զարգացման պլանավորման ու քաղաքական որոշումներ ընդունելու գործընթացին մասնակից կառույցներ:
- Ջրային ռեսուրսներին առնչվող տնտեսության բնագավառներ՝ ներառյալ կենցաղային ջրամատակարարում և ջրահեռացում, ոռոգում, գյուղատնտեսություն, էներգետիկա, առողջապահություն, արդյունաբերություն, տրանսպորտ, ձկնարդյունաբերություն և տուրիզմ, նախարարություններ, և հարակից կառույցներ:
- Ջրատնտեսական կազմակերպություններ, գործակալություններ և հարակից մարմիններ (օրինակ՝ ջրավազանային մարմիններ):

Գործընթացի հիմնական փուլերում ներգրավված շահագրգիռ կողմեր.

- Տեղական համայնքներ և համայնքային կազմակերպություններ (օրինակ՝ քաղաքապետեր և հոգևոր առաջնորդներ):
- Մասնավոր ոլորտներ, որոնք ներառում, բայց չեն սահմանափակվում ջրամատակարարման և սանիտարական ծառայություններ մատուցելով:
- Ֆինանսական կազմակերպություններ (օրինակ՝ դոնոր կազմակերպություններ, միջազգային բանկեր, միկրովարկեր տրամադրող կազմակերպություններ):
- Ոլորտային հետաքրքրություն ունեցող խմբեր, օրինակ՝ ագարակատերեր և ձկնորսներ:
- Կանանց խմբեր և միություններ:
- Էթնիկ խմբերի ներկայացուցիչներ:
- Ոչ կառավարական կազմակերպություններ:
- Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:
- Հետազոտական և կրթական կառույցներ (ներառյալ համալսարանները):

Գիտելիքների բազայի ստեղծում

Գոյություն ունի ռազմավարության գիտելիքների բազա ստեղծելու երկու տեսակետ՝

- Ջրային ռեսուրսներին առնչվող հիմնական խնդիրների ու անհրաժեշտ փոփոխությունների որոշման, գործընթացի և դրա ազդեցության մոնիթորինգի հիմք ստեղծելու նպատակով տեղեկատվության հավաքում:
- Որոշումներ կայացնելու գործընթացը տեղեկատվությամբ ապահովող համակարգի՝ շարունակական հիմքով մշակում:

Հիմնական ջրային ռեսուրսների և զարգացման հիմնախնդիրների նախնական գնահատումը ջրատնտեսական խնդիրների ու առաջադրանքների բացահայտման և հստակեցման լավ հիմք է: Գլոբալ էկոլոգիական ֆոնդը (GEF) խստորեն հակված է գործընթացը սկսել մրցակցային ջրօգտագործման և ըստ ավազանների ջրային ռեսուրսների վրա ազդող հողօգտագործման վերլուծությունից:

Ջրային ռեսուրսների գնահատում

Ջրային ռեսուրսների գնահատումը ներառում է տվյալ երկրի կամ տարածաշրջանի ջրային ռեսուրսների ամբողջական ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով տեղի բնակչության ջրօգտագործման չափը: Գնահատումը ընդգրկում է նաև ջրամատակարարման,

ջրօգտագործման, ինչպես նաև ջրի անվերադարձ օգտագործման՝ էլեկտրաէներգիայի ստացման և տեղափոխման խնդիրներ: Գնահատման բաղադրիչների օրինակներ են՝

- Ջրային ռեսուրսների հիմնական հիմնախնդիրները և հնարավոր բախումները, դրանց լրջությունն ու սոցիալական հետևանքները, ինչպես նաև ջրհեղեղների ու երաշտների ռիսկն ու վտանգը:
- Սոցիալական և տնտեսական զարգացման համապատասխան հիմնախնդիրները, որոնք կարող են ազդել ջրի առաջարկի ու պահանջարկի վրա, ինչպես քաղաքների աճը, առևտրային քաղաքականությունն ու սննդամթերքի անվտանգության ապահովման այլընտրանքները:
- Չքավորների և կանանց՝ ջրային ռեսուրսներին առնչվող բազում խնդիրները և ջրից օգտվելու առկա միջոցները:
- Զարգացման այլընտրանքներին առնչվող ջրի պահանջարկը:
- Ջրօգտագործման սոցիալ-տնտեսական ոլորտներ՝ ներառյալ օգտագործողի վարքը, պահանջարկի ճկունությունը և պահանջարկը կառավարելու հետագա արդյունքները:
- Ե՛վ ցամաքային, և՛ ջրային էկոհամակարգերի ջրապահանջը (ներառյալ քանակը, որակը և մատակարարման հաճախականությունը), ընթացիկ պայմաններն ու հնարավոր վտանգները:
- Մակերևութային և ստորերկրյա ջրերի քանակական և որակական հատկությունները և հիդրոլոգիական ցիկլի հիմնական պարամետրերը:

Ջրային ռեսուրսները լիարժեք գնահատելը լավ ներդրում է, բայց պահանջում է հսկայածավալ աշխատանք: Երկրները կարող են առաջնային դարձնել տեղեկացված լինելու իրենց կարիքները՝ նախապես կենտրոնանալով այն հարցերին, որոնք ուղղակիորեն առնչվում են իրենց խնդիրներին:

Ջրային ռեսուրսները լիարժեք գնահատելը լավ ներդրում է, բայց պահանջում է հսկայածավալ աշխատանք: Երկրները կարող են առաջնային դարձնել տեղեկացված լինելու իրենց կարիքները՝ նախապես կենտրոնանալով այն հարցերին, որոնք ուղղակիորեն առնչվում են իրենց խնդիրներին:

Ջրային ռեսուրսների լիարժեք գնահատումը պետք է հիմնված լինի ֆիզիկական և սոցիալ-տնտեսական ճիշտ տվյալների վրա: Մոնիթորինգի դիտարկման կետերում և կայաններում պարբերաբար իրականացվող դիտարկումները անհրաժեշտ է իրականացնել ճիշտ գնահատման և իրատեսական եզրահանգումների ընդունելի հաճախականությամբ: Իսկ սա էլ իր հերթին պահանջում է մոնիթորինգի համակարգերի համապատասխան ֆինանսական աջակցություն կառավարությունից:

Մոդելավորումը կարող է օգտագործվել զարգացման տարբերակների ազդեցություններն ու ուղղություններն ուսումնասիրելու համար: Սակայն, որպեսզի մոդելները օգտակար լինեն կայուն լուծումների գործընթացում, դրանք պետք է անդրադառնան ոչ միայն տեխնիկական և ընդհանուր տնտեսական արժեքներին, այլև շահագրգիռ կողմերի նախապատվություններին: Որպեսզի մոդելները, իրոք, օգտակար լինեն որպես որոշումներ ընդունելուն օժանդակող գործիքներ, դրանք պետք է ընդգրկվեն տեղական կառուցվածքային և մշակութային համատեքստում:

Ռազմավարական զարգացման գործընթացի գնահատման համար հավաքվող տեղեկությունները ներառում են՝

- Տվյալներ ջրին և դրան առնչվող ոլորտներին վերաբերող պլանավորման և կառավարման ընթացիկ գործընթացների մասին, ներառյալ կառուցվածքային գնահատումը (տե՛ս Շրջանակ 5, էջ 22):
- Մարդկային հասանելի ռեսուրսների և հզորությունների ստեղծման կարիքների մասին՝ ՋՌՀԿ ռազմավարության մշակման և իրականացման համար:
- Ազգային և միջազգային համապատասխան փորձ և ՋՌՀԿ գործիքներ:

Տվյալների բազա ստեղծելուն խոչընդոտող հանգամանքներ՝

- Հաճախ միայն ջրային ռեսուրսներին և դրանց առնչվող տնտեսության այլ ոլորտների աշխատողներն ունեն ռազմավարություն մշակելու և որոշումներ կայացնելու պահանջվող տվյալներ:
- Որոշ դեպքերում տվյալները կարող են ոչ հավաստի լինել կամ բոլորովին չլինել: Սակայն հուսալի տվյալների բացակայությունը չի կարող արդարացնել աշխատանք չիրականացնելը. բարձրակարգ մասնագետները կարող են խնդիրները լուծել նաև առանց տվյալների ամբողջական բազայի առկայության:

- Տվյալների փոխանակումը հաճախ նորմա չի համարվում և պահանջում է բյուրոկրատական կարգերի պես «դժվարանցանելի հատվածների» վերացում, որը տարբեր նախարարությունների և կազմակերպությունների միջև տեղեկություններ փոխանակելու, վստահության միջավայր և տեղեկություններ փոխանակելու նախադրյալներ ստեղծելու խոչընդոտ է:

Տեղեկատվությունը հասանելի դարձնելը:
Տվյալների բազա ստեղծելիս ամենավերջին սպառողների ներգրավվածությունը կօժանդակի, որ՝ 1) գիտելիքների բազան ուղղվի մարդկային կարիքներին, 2) տեղեկատվությունն ավելի հասանելի լինի, 3) ամենավերջին սպառողները իրազեկվեն առկա ռեսուրսներին:
Հաճախ տեղեկությունը հասանելի է լինում միայն փորձագետների ու մասնագետների նեղ շրջանակին՝ հանգեցնելով «տեղեկատվական անհամաչափության»: Այս անհամաչափությունը վերացնելու համար անհրաժեշտ են որոշակի միջոցառումներ: Ճիշտ որոշումներ ընդունելու, դրանց իրականացումը գնահատելու և հաշվետվությունը ապահովելու համար տեղեկատվության հասանելիությունը կենսականորեն կարևոր է:
Մշտապես ազատ մուտքի հնարավորությամբ տեղեկատվական բազա ստեղծելը կարող է օգնել քաղաքականություն ձևավորողներին, բնական ռեսուրսների կառավարիչներին, ինչպես նաև ջրօգտագործողներին՝ անհրաժեշտ փոխզիջումների հասնելու և գիտակցված որոշումներ ընդունելու, որոնք հաշվի են առնում փոփոխվող պայմաններն ու իրավիճակները: Մոդելավորման մեթոդները և ջրօգտագործողների կարիքները հաշվի առնող իրավիճակների վերլուծությունը հաճախ շատ կարևոր մեխանիզմներ են, որոնք հնարավորություն են ընձեռում նոր ձևով աշխատելու:
Իհարկե, միայն հասանելի տվյալների բազա ստեղծելը բավական չէ: Պետք է նաև հաշվի առնել սոցիալական, քաղաքական և տնտեսական գործոնները, որոնք հնարավորություն կտան տվյալներն ավելի արդյունավետ օգտագործել ճիշտ որոշումներ կայացնելիս:

Տվյալներ փոխանակելու դասեր (քաղված ՋՌՀԿ (Tool Box) - ից)
- Տվյալներ փոխանակելիս հարկ է հաշվի առնել երկրների մշակութային և քաղաքականության հատուկ համատեքստերը:
- Տվյալներ փոխանակելիս անհրաժեշտ է ազատ մտածելակերպ, որ բխում է համապատասխան համոզմունքներից. երկկողմ վստահություն ստեղծելը կարող է ժամանակ պահանջել, սակայն այն ևս կարևոր է:
- Տեխնիկական մակարդակով տեղեկատվություն և տվյալներ փոխանակելու համակարգերը պետք է՝
  - Հիմնվեն ինչպես կառավարման հնարավորությունների ու տեխնոլոգիաների (կազմակերպությունների իրավասություններ և տեխնիկական հնարավորություններ), այնպես էլ բազմակողմանի տեղեկատվությունը համատեղելու կարողությունների վրա:
  - Լինեն պահանջարկով ուղղորդվող, որպեսզի համակարգի ձևը, կառուցվածքը և արտադրանքը ուղղվեն վերջնական սպառողին:
  - Լինեն ճկուն, որպեսզի հնարավոր լինի օգտագործել փոխանակման համակարգը տարբեր վայրերում և իրավիճակներում:
  - Լինեն թափանցիկ և ստույգ, որպեսզի տեխնիկական և ոչ տեխնիկական մասնագետները (շահագրգիռ կողմերի մեծամասնությունը) կարողանան հետևել տվյալներ ստանալու և գնահատելու գործընթացին:
  - Լինեն ինտերակտիվ, որպեսզի ապահովեն շահագրգիռ կողմերի մասնակությունը որոշումներ կայացնելու գործընթացին:
  - Լինեն դյուրամատչելի և օգտակար՝ խնդիրների լուսաբանումը խթանելու համար:

Ժամկետային շրջանակների ու հսկողության ցուցանիշների սահմանում

Ինչքա՞ն ժամանակ կպահանջվի ՋՌՀԿ ռազմավարություն մշակելու համար:

Ռազմավարության երկարաժամկետ հաջողության պայմաններում գործընթացի սխալներին և բախումային կետերին տեղյակ լինելը նույնիսկ ավելի կարևոր է, քան դրա հաջողությունների մասին տեղեկանալը:

Ինչի՞ց է դա կախված: Որոշ երկրներ կարող են որդեգրել արագ մոտեցման քաղաքականություն և այնուհետև իրագործելիս անընդմեջ այն թարմացնեն: Այլ երկրներ կարող են ընտրել ավելի դանդաղ զարգացման տարբերակ (հավանաբար շահագրգիռ կողմերի մասնակցությունն ու սեփականատիրության իրավունքն ապահովելու համար): Երկու ճանապարհներն էլ, համաձայն փուլերի և ժամկետի սահմանման, անհրաժեշտ են՝ ռազմավարությունը վերջնագծին հասցնելու համար:

Ռազմավարությունը պետք է այնքան ճկուն լինի, որ կարողանա արձագանքել քաղաքական, տնտեսական և շրջակա միջավայրի փոփոխվող պայմաններին, օգտակար կարող է լինել նաև պարբերական վերլուծության և փոփոխությունների ժամկետային շրջանակների հաստատումը: Շատ կազմակերպություններ հինգ տարին մեկ թարմացնում են իրենց ռազմավարությունները, բայց կարող են դա ավելի հաճախ անել արագ փոփոխությունների ժամանակահատվածում: Իրականացումը կարող է տեղի ունենալ միայն փուլերով՝ կախված բարեփոխումների աշխարհագրական շրջանակից, հերթականությունից և ժամկետից: Գործողությունների ծավալները, ժամկետը և բովանդակությունը կարելի է շտկել առկա փորձով: Սա ընձեռում է փոփոխությունների, բարեփոխումների և ուղղումների հնարավորություն, եթե արդեն իսկ ստեղծվել են հիմնավորված որոշումների համապատասխան հիմքեր:

Ռազմավարություններ և փոփոխությունների շրջանակ մշակելիս կարևոր է ընդունել, որ փոփոխությունների գործընթացը հավանաբար արագ չի լինի: Եվրոպայում Ռեյնի հանձնաժողովից մոտ կես դար պահանջվեց, որպեսզի վերջինս ընդգրկվի վերին և ստորին հոսանքի ավելի համապարփակ պլանավորման գործընթացում: Դելավերի և Սաքսքյուհանայի գետավազանային կազմակերպությունները Միացյալ Նահանգներում ավելի շատ շահագրգիռ կողմեր ընդգրկելու նպատակով ավելի քան 60 տարվա դատական պայքար մղեցին: Ավստրիայում Մյուրեյ - Դարլինգ գետավազանային կոմիտեն ՁՌՀԿ իր պլանը մշակեց մի ամբողջ սերունդ տևած քննարկումներից հետո:

Մոնիթորինգ և գնահատում

Մշտական մոնիթորինգ և գնահատում ապահովող ցուցիչները որոշելը, հսկելու ցուցանիշների և մեխանիզմների հաստատումը հաջողությամբ իրականացվող ցանկացած պլանի հիմնական բաղադրիչներն են: Մոնիթորինգն ու գնահատումը ունեն երեք հիմնական նպատակ՝ համոզվելու՝ արդյոք իրագործումը ճիշտ է ընթանում, դիտարկելու թե՛ կարճա-, թե՛ երկարաժամկետ ազդեցությունները, և գնահատելու՝ արդյոք այդ ազդեցությունները նպաստում են ռազմավարությամբ որոշված նպատակին հասնելուն:

Մոնիթորինգի և գնահատման (Մ և Գ) չափանիշներ: ՁՌՀԿ բարեփոխման ընթացքի մոնիթորինգ ու գնահատում տեղի է ունենում տարբեր մակարդակներում՝ սկսած ծրագրի պարզ իրականացման ընթացքից մինչ ընդհանուր ազգային սոցիալ-տնտեսական և էկոլոգիական ցուցանիշների վրա ունեցած ազդեցություն: Որքան մակարդակը բարձր է, այնքան շատ են մեթոդաբանական խնդիրները, և ավելի դժվարանում է ազդեցություններ նկարագրող ցուցանիշները պարզելու ընթացքը: Գործընթացը սկսելու համար չափազանց կարևոր է որոշել նպատակներն ու մակարդակները, Մ և Գ-ի իրագործելիությունը, սպասվող արդյունքների ճշգրտությունն ու իմաստը, սպասվող արդյունքների նշանակությունն ու կարևորությունը կամ դրանց անկարևորությունը: Գործիքը կամ մոնիթորինգի մոդելը հաճախ կապված են պլանի, ծրագրի, գործընթացի տրամաբանական կառուցվածքին:

Գնահատման ընդհանուր մոդելը պետք է ընդգրկի հետևյալ տարրերը[14]:

- **Արդյունավետություն.** «ռեսուրսները արդյունքի վերածելու արդյունավետություն»: Ինչպիսին է արդյունք-ծախս հարաբերությունը, ինչպես են տնտեսական ներդրումները վերածվում արդյունքի, և արդյոք կարելի էր նույն արդյունքի հասնել լավագույն ձևով:
- **Էֆեկտիվություն.** «արդյունքների համապատասխանություն նպատակներին»: Խնդիրների իրականացման

[14] *Մեջբերված է նորվեգական համագործակցության զարգացման գործակալության հաշվետվությունից, 1993թ.:*

աստիճանը և արդյոք դրանք կարող էին լուծվել պլանի, ծրագրի, գործընթացի արդյունքների հիման վրա:

- **Ազդեցություն.** «ազդեցություն՝ խնդրից նպատակին հասնելու համապատասխանություն»: Բնակչության թիրախ-խմբերի ու ազդակիր այլ խմբերի հետ համատեղ դիտարկվող փոփոխություններն ու ազդեցությունները (դրական և բացասական, պլանավորած և անկանխատեսելի) պլանի, ծրագրի, գործընթացի իրականացման շնորհիվ:
- **Պատշաճություն.** «համապատասխանություն զարգացման առաջնայնություններին»: Որքանով է պլանը, ծրագիրը, գործընթացը համապատասխանում պլանավորման արդյունքներին, խնդիրներին և նպատակներին, ինչպես նաև տեղական և ազգային զարգացման առաջնայնություններին:
- **Կայունություն.** «շարունակական դրական ազդեցություն պլանավորման մակարդակում»: Ծրագրի դրական ազդեցության աստիճանը՝ նախատեսվող ազգային ռեսուրսների օգտագործմամբ, որքանով է շարունակական:

Ցուցանիշների սահմանում: Ցուցանիշները անհրաժեշտ են գործընթացքի իրականացման ընթացքը, միջոցառումների ուղղակի արդյունքները ու երկարաժամկետ ազդեցությունները գնահատելու համար: Ազգային տնտեսության, սոցիալական և էկոլոգիական նպատակների վրա նախատեսված միջոցառումների ազդեցության աստիճանը գնահատելու համար ցուցանիշների սահմանումը բազմաթիվ գործոնների առկայության շնորհիվ կարող է պահանջել լրացուցիչ ջանքեր, սակայն դրանք լավագույնս հատուցվում են: Մանրակրկիտ սահմանված ցուցանիշները կարող են խթանել ռազմավարության մշակման գործընթացում խնդիրների բացահայտումը, իսկ դրանք չլինելու դեպքում՝ բարելավումները. իրագործման ընթացքում անհրաժեշտ ուղղումները դժվար իրականանալի, եթե ոչ անհնար կլինեն:

Ընդգրկված շահագրգիռ կողմեր: Լավ մոնիթորինգն ու գնահատումը շահագրգիռ կողմերին ընդգրկում է երկու նպատակով՝ 1) հաճախ որակյալ գնահատումներն անհնար են առանց շահագրգիռ կողմերի մասնակցության, 2) գնահատումը կարող է իրագործման ընթացքին աջակցող հզոր գործիք դառնալ, միայն եթե շահագրգիռ կողմերը վստահում են գնահատման ընթացքին և տեղյակ են արդյունքներին: Կանանց և այլ անտեսված խմբեր ընդգրկելը կարող է հատկապես կարևոր լինել՝ հստակ պատկերացում կազմելու, թե ինչպես են արդյունավետ միջոցառումները աջակցում զարգացման նպատակներին:

Փորձի ձեռքբերում: Մ և Գ-ի արդյունքները պետք է սերտորեն առնչվեն գործընթացին: Անհրաժեշտ է ինչպես ձախողումների, այնպես էլ հաջողությունների վերաբերյալ տեղեկատվություն: Ռազմավարության երկարաժամկետ հաջողության պայմաններում գործընթացի սխալներին և բախումային կետերին տեղյակ լինելը նույնիսկ առավել կարևոր է, քան հաջողությունների մասին տեղեկանալը:

Շրջանակ 8. Հաջողված ռազմավարության հիմքեր

- Նպատակների և խնդիրների համաձայնեցում:
- Երկարաժամկետ հիմքով կառուցվածքների ստեղծում ավելի բարենպաստ որոշումներ կայացնելու համար:
- Զարգացման երկարաժամկետ նպատակների և ազգային զարգացման ընթացիկ պլանավորման կապ:
- Նյութատեխնիկական բազայի պահանջների կանխատեսում և համապատասխան ներդրումներ:
- Շահագրգիռ կողմերի ընդգրկում և աջակցություն (ներառյալ կանայք և չքավոր խավերը):
- Գործընթացին մարդկային և ֆինանսական ռեսուրսների բավարար ներդրում:
- Նպատակների և փուլային ժամանակացույցի կազմում:
- Գործընթացին սերտորեն առնչվող մոնիթորինգի և գնահատման մեխանիզմների ապահովում:

Վերահսկմանը և գնահատմանը առնչվող խնդիրներ: Կայուն զարգացման կոմիտեն ազգային զարգացման ռազմավարություն մշակելու իր ուղեցուցային փաստաթղթում առանձնացրել է Վ և Գ-ի իրականացման մի քանի հնարավոր փորձաքարեր, որոնք հարկ է հիշատակել այստեղ ևս[15]:

- Գնահատման մշակույթի բացակայություն և հաճախ ոչ բարյացակամ վերաբերմունք դրա հանդեպ:
- Արտաքին աղբյուրների նախաձեռնած գնահատումը կարող է դժվար լինի իրականացնել քաղաքական առումով, իսկ գնահատման նրանց փորձը ընդունելն ու օգտագործելը չի արտացոլի տեղական շահագրգիռ կողմերի ընթացիկ գնահատումները (օրինակ՝ երրորդ կողմն անպատճառ իրականացնում է գնահատում, քանի որ անհրաժեշտ է ապահովել օգտագործված միջոցների հաշվետվություն):
- Վախ, որ գնահատումը կարող է հանգեցնել միջազգային մակարդակին չհամապատասխանող համեմատությունների:
- Որոշիչների և ցուցանիշների անհամաձայնություններ, որոնք կհանգեցնեն տվյալների անհամապատասխանության:
- Տվյալների բազա մուտքի թույլտվություն (հատկապես գնահատման գործընթացի ժամանակ) և հասանելիություն ընդգրկված շահագրգիռ կողմերին:
- Տարբեր կազմակերպությունների գնահատումների ամփոփում: Օրինակ՝ հանրության, կառավարության և տարբեր նախարարությունների՝ փոխադարձաբար լրացնող գնահատումներ:
- Գնահատման այնպիսի կառուցվածքի ստեղծում, որը կկրճատի քաղաքական հակամարտության պատճառով «թաղված» լինելու վտանգը:

[15] *ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական կապերի բաժին, 2002: Կայուն զարգացման ազգային ռազմավարություն՝ նոր հազարամյակում կայուն զարգացման կառավարում:*

ԲԱԽՎԵԼՈՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ

Ըստ ԳՋՀ-ի ոչ պաշտոնական ուսումնասիրությունների և շահագրգիռ կողմերի հետ ունեցած փոխադարձ կապի՝ գոյություն ունի երեք տարածված փորձաքարեր, որոնց երկրները բախվում են ռազմավարություն մշակելիս և իրագործելիս. գործընթացին աջակցելու, ֆինանսավորման և հնարավորությունների բացակայություն:
Բարձր մակարդակներում աջակցության, ղեկավարության և պարտականությունների բացակայություն. հաճախ այս ամենի պատճառը ռազմավարության էության և դրա մշակման միջոցները չընմբռնելն է. սա ընթացքը սկսելուն խոչընդոտող հիմնական հանգամանքն է: Իսկ առանց լայնածավալ աջակցության՝ վարչապետից մինչև հասարակ գյուղացի, հաջող իրագործումն անհնար է:
Ֆինանսների բացակայությունը չպետք է արդարացնի ռազմավարությունն իրականացնելուց հրաժարելը: Երկրների մեծ մասը ի վիճակի է ինքնաֆինանսավորման, իսկ ինչ վերաբերում է միջոցներ չունեցողներին, որոնք կարող են օգտվել մի շարք դոնոր կազմակերպությունների աջակցությունից: Հիմնական ծուղակ են համապատասխան ֆինանսավորման պլան չունեցող իրագործումները և մինչ ռազմավարության ավարտը ֆինանսավորման սպասելը:
Մեկ այլ սխալ քայլ է երկրում համապատասխան կարողություններ չզարգացնելը, որը դանդաղեցնում է աշխատանքները գործընթացի տարբեր փուլերում: Որոշ դեպքերում տվյալ երկրում կարող է չլինել անհրաժեշտ փորձ, այս դեպքում պետք է ուշադրությունը կենտրոնացնել փորձի և տեխնոլոգիաների փոխանակմանը և ոչ թե դրսից փորձագետներ վարձելուն:
Հաջորդ ենթագլուխը առաջարկում է որոշ միջոցներ՝ ինչպես լուծել խոչընդոտները կամ, եթե հնարավոր է, խուսափել դրանցից:

Աջակցությունների համակենտրոնացում

Աջակցությունը կարևոր է բոլոր մակարդակներում՝ բարձր քաղաքական շրջանակներից մինչև ամենաստորին օղակը: Առանց երկրի ղեկավարության քաղաքական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների աջակցության անչափ դժվար է նույնիսկ սկսել ռազմավարություն մշակելու գործընթացը: Իսկ այս մակարդակներում, առանց շարունակական պարտականություններ ստանձնելու, համապարփակ մոտեցումների համար պահանջվող բարեփոխումներ իրականացնելը պարզապես անհնար է: Մյուս կողմից, եթե գործընթացը աջակցության էական հիմքեր չի ապահովում և առաջադրման համար հիմնվում է միայն քաղաքական կամքի վրա, ապա քաղաքական ռեժիմի փոփոխման արդյունքում այն կարող է ամբողջովին ձախողվել: Շահագրգիռ կողմերի՝ գործընթացի մշակմանն ու իրագործմանը մասնակցություն ապահովելը նույնպես աջակցությունը մոբիլիզացնելու գործառույթներից է: Աջակցումը մոբիլիզացնելիս պահանջվում է հատուկ ուշադրություն նրանց նկատմամբ, ովքեր պատասխանատու են ՋՈՒՀԿ առօրյա իրագործման և ջրի արդյունավետությունը բարձրացնելու միջոցառումների համար: Անհրաժեշտ է գիտակցել, որ ծառայողները ռազմավարությունը կարող են դիտարկել՝ որպես իրենց աշխատանքին սպառնացող հնարավոր վտանգ կամ լրացուցիչ աշխատանք, որը պետք է իրականացնի արդեն իսկ գերծանրաբեռնված անձնակազմը: Որևէ մեկին համեմատաբար ավելի հեշտ է օգտակար գործիքներով զինել, քան համոզել, որ այդ գործիքն օգտագործի:
Աջակցությունը համակենտրոնացնելու առաջին քայլը հաճախ տեղեկատվության ապահովումն է: ՋՈՒՀԿ սկզբունքները ջրային ռեսուրսների կառավարման և զարգացման գործընթացում ներդնելը պահանջում է փոփոխություններ տարբեր մակարդակներում՝ քաղաքական, կառուցվածքային և գործնական, սակայն անհրաժեշտ է սկսել մտածելակերպը փոխելուց: Մարդիկ (քաղաքական որոշում ընդունողից մինչև դաշտում աշխատող գյուղացի) կարիք ունեն հասկանալու, թե որքան շահութաբեր է բարեփոխման ընթացքը իրենց համար, և ինչպես է այն անդրադառնում իրենց իսկ հետաքրքրություն-

ներին ու խնդիրներին, ինչպես նաև հասարակական լայնածավալ խնդիրներին:

Դրական օրինակների խթանում: Տարբեր մակարդակներում աջակցություն ապահովելու միջոցներից են նաև ՋՌՀԿ դրական փորձի ցուցադրումը, իդեալական օրինակները՝ որտեղ են երկրներն արդեն իսկ իրականացնում համապարփակ կառավարում: Այսպիսի օրինակներ կան շատ երկրներում, որոնցում բազմաթիվ գործակալություններ ուժերը համախմբում են հասարակության հետ՝ ջրային ռեսուրսներին առնչվող խնդիրները լուծելու համար:
Օրինակ՝ Շրի Լանկայում Մահավելի լիազորությունը (Մահավելի ավազանի ջրային ռեսուրսների կառավարման և զարգացման համար պատասխանատու գործակալություն), առողջապահության նախարարությունը և տեղական գյուղատնտեսական կազմակերպությունները համագործակցում են՝ մալարիայի տարածման վտանգը նվազեցնող ուղիներ գտնելու համար: Այս համագործակցությունը խնդրին տարբեր տեսանկյուններից մոտենալու հնարավորություն ընձեռեց (ոռոգման համակարգերում մալարիայի տարածման օջախների ոչնչացում և համայնքում ջրօգտագործման և հողօգտագործման լավագույն փորձի փոխանակում): Այսպիսի համապարփակ մոտեցումների մասին տեղեկատվությունը շատ կարևոր է՝ մարդկանց ապացուցելու, որ ՋՌՀԿ-ն օգտակար գործիք է՝ հիմնված առողջ մտքի և ոչ թե նորագույն տեսությունների վրա, որոնք քիչ բան են տալիս և բարդացնում են աշխատանքը:

Հավելյալ արժեքներ: Մեկ այլ հաջողված մոտեցում է «ցածր կախված պտուղի» իրավիճակը, երբ ՋՌՀԿ մոտեցումը և փոքր ներդրումը կարող են արագ շահույթ բերել: Քաղաքական որոշումներ կայացնողներին ՋՌՀԿ մոտեցման հնարավորությունների տնտեսական վերլուծության արդյունքները ներկայացնելը կարող է նպաստել ռազմավարության ավելի մեծ մտքերի «վաճառքին», որն էլ իր հերթին կներդնի նման հնարավորություններով շարունակական գործելու մեխանիզմներ: Ուսումնասիրել ենթակառուցվածքում առկա կամ պլանավորվող ներդրումները: Արդյոք ավելի համապարփակ մոտեցումների անցնելը կարող է բարձրացնել այդ ներդրումների արժեքը: ԳՋՀ-ի պատրաստած ՋՌՀԿ ձեռնարկը (Tool Box) նմանատիպ հնարավորություններ գտնելու հրաշալի ուղեցույց է: Այնուամենայնիվ, հարկ է նաև հիշել, որ ՋՌՀԿ-ի գործնական և ոչ թե թղթային ներդրումը պետք է անպայմանորեն համաձայնեցվի անգամ ամենավերջին սպառողների հետ:

«Սովորականի նման գործելու» արժեքի հաշվարկում: Կարելի է նաև շարժվել հոսանքին հակառակ՝ ներկայացնելով ՋՌՀԿ մոտեցումները չկիրառելու պատճառած կորուստները: Օրինակ՝ Հյուսիսային Նիգերիայի Կանո գետի ոռոգման ծրագրի տնտեսական վերլուծության և ստորին հոսանքում հեղեղահուների ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է հեղեղահուների տնտեսական շահույթի ամբողջ շղթա (գյուղատնտեսություն, ձկնորսություն, վառելափայտ), որում ջրի ամեն 1000մ^3-ից ստացվող նվազագույն շահույթը կազմում է 32 ԱՄՆ դոլար: Մինչդեռ ոռոգման համակարգում ջրի ամեն 1000մ^3-ից ստացվող առավելագույն շահույթը կազմում է 1.73 ԱՄՆ դոլար (0.04 ԱՄՆ դոլար 1000մ^3 ջրից, երբ ներառվեցին նաև շահագործման ծախսերը)[16]: Վերին հոսանքի ոռոգման համակարգի զարգացման շնորհիվ՝ հեղեղված տարածքը 2/3-ով նվազել է: Անկախ փորձագետները հաշվարկել են, որ հեղեղահուների բարձր արդյունավետության պայմաններում վերին հոսանքում պլանավորված բոլոր ջրամբարների և ոռոգման համակարգերի կառուցումը կհանգեցնի 20 մլն ԱՄՆ դոլարի կորստի: Այս դեպքերում ՋՌՀԿ մոտեցման կիրառումը կարող էր ապահովել տնտեսական մեծ օգուտներ:
Յեմենում ջրային ռեսուրսների կառավարման նոր մոտեցումներ մշակելու անհրաժեշտությունը կառավարությունն ընդունեց միայն այն ժամանակ, երբ հաշվարկեց մշտական վատ կառավարման և անկայուն գործընթացի արդյունքում տնտեսական կորուստները, որոնք էլ իրազեկման և համաձայնությունների գործընթացի ճանապարհ հարթեցին:

---

[16] *Տես Աքրեման Մ. 2000թ., Ամբարտակների միջազգային կոմիտեի հիմնարար ուսումնասիրություն, Բարբիեր Է. Բ., Թոմսոն Ջ. Ռ. 1998թ., Ջրի արժեքը. հեղեղահուների շահութաբերությունը՝ համեմատած Հյուսիսային Նիգերիայում մեծամասշտաբ ոռոգման շահույթներին, Ամբիո, 27(6), 434-440:*

Ֆինանսական ռեսուրսների համակենտրոնացում

Գոյություն ունի ֆինանսավորման երկու ոլորտ, որոնք պետք է դիտարկել: Առաջինը առնչվում է ֆինանսական ռեսուրսներին, որոնք անհրաժեշտ են ՋՌՀԿ ռազմավարություն նախապատրաստելու համար, երկրորդը՝ ռեսուրսներին, որոնք անհրաժեշտ են ինչպես ջրային ռեսուրսների կառավարման մեջ՝ ռազմավարությամբ նախատեսված փոփոխություններ իրականացնելու, այնպես էլ ենթակառուցվածքներում՝ պլանավորված միջոցառումներ անցկացնելու համար: Ռազմավարության իրականացման համար ֆինանսական ռեսուրսներ համակենտրոնացնելու գործընթացը պետք է իրականացվի ռազմավարություն մշակելու գործընթացին զուգահեռ: Հակառակ դեպքում մինչև անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հայթայթելը առկա է պահը կորցնելու վտանգ:

Ֆինանսավորման ապահովում: Զարգացած և միջին եկամուտ ունեցող երկրների մեծ մասը ի վիճակի է սեփական միջոցներով իրականացնել ռազմավարություն մշակելու գործընթաց: Բայց ցածր եկամուտ ունեցող շատ երկրներ չունեն ԿՁՀԳ 2005թ.-ի նպատակակետին ընդառաջ գնալուն անհրաժեշտ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ: ԿՁՀԳ իրականացման պլանը ընդունեց այս հարցադրումը և կենտրոնացավ այդպիսի երկրներին աջակցելու ծրագրերին: Որոշ դոնոր երկրներ կամ արդեն պարտավորվել են աջակցել զարգացող երկրներին նրանց ռազմավարությունների մշակման գործընթացում, կամ էլ պլանավորում են այդ անել՝ օգտագործելով ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ մեխանիզմներ: Կանադան (CIDA), Նիդերլանդները, Նորվեգիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները (USAID) և Գլոբալ էկոլոգիական ֆոնդի (GEF) կամ Գլոբալ ջրային համագործակցության (GWP) միջոցով պատրաստվում են օժանդակել ռազմավարություն մշակելու տարբեր գործընթացների: Դանիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի նման դոնորները երկկողմ հիմքով խթանում են ՋՌՀԿ ռազմավարության մշակումն ու իրականացումը՝ ուղղակիորեն օժանդակելով այդ երկրներին:

Իրագործման ֆինանսավորում: Ռազմավարություն իրականացնելու համար պահանջվող ռեսուրսները, իհարկե, անչափ կարևոր են: Մի կողմից՝ հիմնական միջոցներն անհրաժեշտ են ջրային ռեսուրսների և ենթակառուցվածքների զարգացման համար (խողովակաշարեր, ջրամբարներ, ոռոգման համակարգեր, ջրամաքրման կառուցվածքներ և այլն): Մյուս կողմից՝ ֆինանսական (ինչպես նաև մարդկային և տեխնիկական) ռեսուրսներ են անհրաժեշտ «մեղմ» միջոցառումների համար, ինչպիսիք են քաղաքական աշխատանքը, օրենքները մշակելը և ընդունելը, կառուցվածքային բարեփոխումները, կառավարման գործիքներ մշակելը և նյութատեխնիկական ու մտավոր ունակությունների բազա ստեղծելը:

Փորձը ցույց է տվել, որ ազգային բյուջեում ֆոնդերի նախնական բաշխումը կենսական նշանակություն ունի հաջողության հասնելու համար: Որոշ երկրներ հանգել են այն եզրակացության, որ գործընթացի վաղ փուլում պետք է կատարել ռազմավարություն իրականացնելուն անհրաժեշտ միջոցների կոպիտ հաշվարկ և ներառել ազգային բյուջե, ինչը ռազմավարություն ձևավորելու ընթացքում կապահովի դրա իրագործումը և կերաշխավորի անհապաղ գործողություններ: Որոշ միջոցներ կարող են պահանջվել ռազմավարության մշակման գործընթացի «թեժ կետեր» ֆինանսավորելու համար՝ չսպասելով, որ ռազմավարության մշակումը ավարտվի, և այն ընդունվի:

Ռազմավարության իրականացման համար դոնորների աջակցությանը հենվող երկրներին անհրաժեշտ են դոնորների հետ հանդիպումներ՝ ռազմավարություն մշակելու ընթացքում պայմանագրեր ստորագրելու նպատակով: Մինչ «ծրագրերի» փուլում նման գործողություններ կազմակերպելը կարող է ավելի արդյունավետ լինել, քան ֆինանսներ փնտրելու համընդհանուր կամ փուլային մոտեցումը: Ինչևէ, երբեմն կարող է օգտակար լինել նաև մի շարք ենթածրագրեր նախապատրաստելը (ինչպես, օրինակ, տվյալներ հավաքելու համակարգը հզորացնելը), որոնք կարող են անմիջապես ֆինանսավորվել:

Մարդկային ռեսուրսների համակենտրոնացում

Շատ երկրներ գտնում են, որ ռազմավարության մշակման և իրագործման գործընթացները կարիք ունեն հզորությունների զարգացման: Պարզ է, որ բովանդակալից ՋՌՀԿ ռազմավարություն մշակելու համար մասնագիտացված բազմաթիվ ոլորտներում անհրաժեշտ են տեխնիկական միջոցներ: Միևնույն ժամանակ նաև պետք են մասնակցային գործընթացը կառավարելու միջոցներ (հաղորդակցվելու, բանակցելու, տարաձայնությունները հարթելու, միջոցներ հայթայթելու, փոխհամաձայնեցնելու, ժամանակը կառավարելու և համայնքային ռեսուրսները մոբիլիզացնելու հմտություն), որոնք արդյունավետ ռազմավարության կենսական տարրերն են:

Համապատասխան մասնագետների բացակայությունը լրացվում է արտերկրից հրավիրված խորհրդատուներով, ովքեր կարող են նշանակալից դեր խաղալ տեղական հզորություններ ստեղծելիս և կօժանդակեն ռազմավարություն մշակելիս: Սակայն այս դեպքում վտանգը արտերկրյա փորձագետներից մեծ կախվածությունն է անհրաժեշտ փորձաքննություն ապահովելիս և գործընթացը կառավարելիս:

Ռազմավարություն մշակելու և իրագործելու կարողությունների ստեղծումը շարունակական է: Ամեն մի քայլ թելադրում է նոր գիտելիքների ու կարողությունների ներգրավման անհրաժեշտություն, որն էլ օժանդակում է նոր ուղղություններ գիտակցելուն, փոխադարձ վստահություն ձեռք բերելուն՝ միաժամանակ զարգացնելով ռեսուրսների կառավարմանը խոչընդոտող հանգամանքներին ճիշտ հակահարված տալու կարողություն:

Հզորություններ ստեղծելը հավանաբար կընդգրկի՝

- Ղեկավարման ոլորտում տեխնիկական փորձաքննություն՝ ներառյալ մոնիտորինգ և գնահատում, տեխնիկական և կիրառական գիտություններ, ներառյալ՝ հիդրոլոգիա և էկոլոգիա, հասարակական գիտություններ, հատկապես տնտեսագիտություն, քաղաքագիտություն, իրավագիտություն և վարչարարություն:
- Տվյալների մոդելավորում և վերլուծում, տվյալների բազայի մշակում և շահագործում:
- Տարաձայնությունները հարթելու և բանակցելու հմտություն, անդրսահմանային համագործակցություն և պլանավորում, ֆինանսական ռեսուրսների համակենտրոնացում:
- Ուսուցում (նախագծային կարճաժամկետ մոդուլների մշակում՝ ջրային ռեսուրսներ կառավարողների, որոշումներ կայացնողների, քաղաքական գործիչների, ուսուցման և փորձի փոխանակման համար պատասխանատու անձնակազմ նախապատրաստելու համար):

Հզորություններ ստեղծելու աշխատանքները չպետք է սահմանափակվեն միայն կառավարման կառավարական գործակալություններով, այլ ընդգրկեն նաև ինստիտուտներ, մասնավոր հատվածի համապատասխան կազմակերպություններ, ոչ կառավարական և համայնքային կազմակերպություններ, շահագրգիռ անհատների:

Մասնագետների անհատական զարգացումն ու ուսուցումը արդյունավետ չի լինի այնքան ժամանակ, քանի դեռ չկան կառուցվածքային խթանիչներ, օրինակ՝ կառույցների ղեկավարման և կառավարման բարելավում (տե՛ս Շրջանակ 5, էջ 22): Կառուցվածքները հզորացնելու օրինակները ներառում են ամեն մի կառույցի խնդիրների, ռազմավարության և աշխատանքային պլանի հստակեցում, ըստ կազմակերպության գործառույթի՝ կադրերի ընտրության ուղղորդում, ըստ գործառույթի ու ռազմավարության՝ ֆինանսներով ապահովում: Շատ երկրներ դեռևս պետք է լուծեն երկրում մասնագետներին պահելու և «ուղեղների արտահոսքը» կանխելու նպատակով հրապուրիչ առաջարկներ և աշխատավարձեր ապահելու խնդիրը: Ընդհանուր նպատակը փորձառու մասնագետներով համալրված հզոր կառույցներ ունենալն է:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Ի վերջո, ռազմավարության հաջողված կամ ձախողված լինելը կախված է նրանից, թե որքանով է այն խթանել փոփոխությունները: Սա մի առանձին գործընթացի կամ ռազմավարության փաստաթղթի ձևաչափի հարց չէ, այլ փորձ՝պատասխանելու՝ այն կարող է արդյոք դրական արդյունքների հանգեցնել: Այս գլխում փորձել ենք առանձնացնել մի քանի վերջնական ցուցումներ, որոնք կօգնեն երկրներին, որպեսզի նրանց ռազմավարությունները չկորչեն դարակներում՝ փոշու մեջ, այլ հիմք դնեն շարունակական փոփոխությունների, ինչն էլ կհանգեցնի ջրային ռեսուրսների ավելի կայուն, արդարացի և արդյունավետ օգտագործման:

Խուսափում անգործությունից

1995թ.-ին Նիկարագուան սկսեց ազգային ջրային գործունեության պլանի նախապատրաստական աշխատանքները, որոնք պետք է անդրադառնային ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման հիմնախնդիրների լուծմանը երկրում գոյություն ունեցող կառուցվածքային, օրենսդրական, տնտեսական, քաղաքական և տեխնիկական կառույցների շրջանակներում: 29 ամիս անց ծրագիրը հրատարակեց իր տասներեք հատորանոց վերջնական զեկույցը, որը, ի դեպ, անդրադառնում էր քաղաքականությանը, կառուցվածքային ոլորտներին, տնտեսական միջոցներին, տեխնիկական խնդիրներին և հենց գործողությունների պլանի երաշխիքներին[17]:

Չնայած ծրագրի իրագործման գործընթացին համապատասխան կառույցների ակտիվ մասնակցությանը և ծրագրի վերաբերյալ զեկույցների առկայությանը՝ պլանի հետագա գործողությունները նվազագույնի հասցվեցին: Ինչու՞ գործողության պլանը չիրագործվեց: Ծրագիրն իրականացնողների առանձնացրած գործոններից մեկը անհրաժեշտ մեխանիզմներ ստեղծել չկարողանալն է՝ երաշխավորելու համար, որ ծրագրի ավարտից հետո վերջինիս շրջանակներում կատարված ձեռքբերումները չեն կորչելու: Մեկ այլ հավանական պատճառ է այն, որ գործողության պլանը ընդունվում էր որպես «ծրագիր», որի արդյունքը ավելի շատ տեսական, քան գործնական էր:

Չնայած կարևոր է ռազմավարությունը գործնական փաստաթղթի վերածել, սակայն սա չպետք է դիտվի որպես գործընթացի (որը պետք է լինի շարունակական) ավարտ: Նախորդ բաժիններում նշված առաջարկություններից մի քանիսը, որոնք կարող են օգնել խուսափելու անգործությունից, ընդգրկում են՝

- Ռազմավարություն ձևավորելու փուլում ֆինանսական միջոցների ձեռքբերման աշխատանքներ՝ իրականացման համար ֆինանսներ հավաքելուն տրամադրվող ժամանակը խնայելու համար:
- Կենտրոնացում միջոցներ ստեղծելուն և կառույցները հզորացնելուն, որը կօգնի կազմակերպություններին իրականացնելու նոր առաջադրանքներ և հաղթահարելու խոչընդոտները:
- Կառավարական կառույցների և հասարակության մակարդակով լայնամասշտաբ աջակցության ապահովում, որպեսզի ռազմավարությունը խոցելի չլինի քաղաքական կարգերի կամ հիմնական անձնակազմի փոփոխման դեպքում:
- Ռազմավարության մշակող կազմակերպությունների համար առաջադրանքի ձևավորում և նրանց կողմից հաշվետության ներկայացում ավելի բարձր լիազորությամբ մարմիններին:
- Հնարավոր գործողությունների նկատմամբ իրատեսական մոտեցում՝ ընթացիկ քաղաքական, սոցիալ-տնտեսական, կառուցվածքային իրավիճակում:
- Ջրօգտագործողների պահանջներին համապատասխանող և շահագործման ու ֆինանսապես կայուն ծառայությունների ապահովում և ջրային ռեսուրսների զարգացման պլանավորում:
- Գործընթացի հետադարձ կապը պահպանող մոնիթորինգի և գնահատման ապահովում՝ առաջացած հիմնախնդիրները ժամանակին լուծելու կամ

[17] *ԳՋՀ ՋՈՒՀԿ ծեռնարկ, Նիկարագուա, ազգային ջրային գործունեության պլանի զարգացում, Tool Box, թիվ 12 դեպք:*

հնարավոր խոչընդոտները հաղթահարելու համար:

- Իրականացման համար բավականին ճկուն մոտեցումների կիրառում՝ փոփոխվող պայմաններում ուղղումներ կատարելու և նոր հնարավորություններից օգուտներ քաղելու համար:

Երաշխավորված գործընթացի այլ կարևոր բաղադրիչ է **անցումային ռազմավարության սահմանումը** ընթացիկ իրավիճակից ցանկալի սցենարներին անցնելու համար՝ ըստ Շրջանակ 3-ում (էջ 12) նշված ՋՌՀԿ հատուկ վերափոխման պայմանների, իրականացման ժամանակացույցով և միջանկյալ հսկողության ցուցանիշներով: Ընդ որում անհրաժեշտ են գոյություն ունեցող մոտեցումները նոր պլանավորվող մոտեցումներով ու ազդեցության հսկման ցուցանիշներով վերափոխելու մեթոդներ, ինչպես նաև անցումային ռազմավարության արդյունավետության մոնիթորինգի ու գնահատման մեխանիզմներ:

Ռազմավարության գործունեությունը խթանելու և կարևորությունը հաստատելու մեկ այլ միջոց է **ազգային այլ պլանների և ռազմավարությունների կապակցվածությունը**: Համապատասխան պլանները և ռազմավարությունները, որոնց պետք է փոխկապակցվի ՋՌՀԿ ռազմավարությունը, ներառում են.

- Ազգային հնգամյա պլաններ կամ կայուն զարգացման ռազմավարություն
- Կանանց իրավունքների պահպանման ու զարգացման ազգային պլաններ
- Կենսաբազմազանության ազգային ռազմավարություն և գործողությունների պլան
- Անապատացման դեմ պայքարի ազգային պլան
- Չքավորության կրճատման ազգային ռազմավարական պլան (ԱՉՆՊ)
- Ազգային ռազմավարություններ հազարամյակի զարգացման նպատակներին հասնելու համար:

Բարեփոխումների իրականացում

Փոփոխությունները կարող են ցավոտ լինել, և հաճախ դիմադրության են հանդիպում, քանի որ մարդկանց շրջանում առաջացնում են անապահովության զգացում նույնիսկ այն ժամանակ, երբ գիտակցվում է դրանց անհրաժեշտությունը: Հաճախ լավ նախաձեռնությունները կամ ճշգրտված գործընթացները կարող են ձախողվել, քանի որ մասնագետները կամ քաղաքացիները դրանք չեն հասկանում կամ չեն ընդունում: Կառուցվածքային բարեփոխումը պետք է իրականացվի մասնակցության և խորհրդակցելու միջոցով, որը ընդգրկում է պաշտոնական և ոչ պաշտոնական ուղիներ՝ բարեփոխման գործընթացի էությունը հասկանալու և այն ղեկավարելու համար:

Ամեն երկիր ինքը պետք է որոշի, թե ինչպես իրականացնի բարեփոխումները՝ կախված ընթացիկ իրավիճակից, և թե ինչի է ձգտում հասնել ապագայում: ՋՌՀԿ Tool Box-ում ներկայացված փորձը առաջարկում է նախնական դասեր՝

- Բարեփոխումները պետք է կատարվեն տրամաբանական հաջորդականությամբ և համակարգված, ինչպես նաև բավարարեն երկրի քաղաքական ու սոցիալական պահանջները:
- Կարճ ժամանակահատվածում բազմաթիվ բարեփոխումներ իրականացնելը կարող է բախվել խոչընդոտների: Արդյունավետ մոտեցումը պետք է հստակեցնի առաջնային խնդիրները ու սահմանի դրանց լուծման հաջորդական գործողությունների կարգ:
- Խուսափել քաղաքականորեն և սոցիալապես անընդունելի ոչ իրատեսական բարեփոխումներից:
- Ցանկացած բարեփոխման հիմնական բաղադրիչներ են տեղեկացվածության ընդլայնումը, փորձի փոխանակումը և լիաժեք մասնակցությունը:
- Բարեփոխումը շարժուն գործընթաց է, որի միակ որոշակի բաղադրիչը հենց բարեփոխումների անհրաժեշտությունն է:
- Հետաքրքրված և որոշակի շահ հետապնդող խմբերը պետք է ընդգրկվեն բանավեճերում, սակայն որոշում կայացնողները պետք է խուսափեն որոշակի շահ հետապնդող խմբերի «ծուղակն ընկնելուց»:
- Ե՛վ պետական, և՛ մասնավոր ծառայություններ մատուցողների ղեկավարումը ցանկացած բարեփոխման հիմնական բաղկացուցիչ մասն է,

սակայն ղեկավարները պետք է անկախ և հզոր լինեն:

- Բարեփոխումները պետք է խուսափեն ռեսուրսների կառավարման (կառավարության պարտականություն) և ծառայությունների մատուցման (պետական և մասնավոր) գործառույթները շփոթելուց:
- Ջրի կառավարման բարեփոխումները չպետք է սահմանափակվեն ջրային ռեսուրսների ոլորտով, այլ պետք է ներառեն նաև ջրային ռեսուրսների վրա ներգործող և ազդեցության ենթարկվող ոլորտները:

Միջազգային փորձ

ՋՌՀԿ ռազմավարությունների իրագործումը փորձությունների և սխալների ընթացք է: Չկան համընդհանուր մոդելներ կամ ցուցումներ: Այդուհանդերձ, երկրները կարող են օգտագործել առկա գործիքներն ու մյուսների փորձը՝ դրանով իսկ ընդլայնելով հաջողության հասնելու իրենց հնարավորությունները:

ՋՌՀԿ Tool Box-ը այդ փորձը կիսելու մի մեխանիզմ է: Այն ընդհանրացնում է փորձարկված բոլոր միջոցները և ողջ աշխարհում ռազմավարության գործնական իրագործումներից ձեռք բերված գիտելիքները, ինչպես նաև կապեր հաստատում համապատասխան մասնագիտական և տեղեկատվական ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ:

Tool Box-ի ուսումնասիրությունները ունեն երեք բնորոշում՝

- Նկարագրում են իրական փորձը և գործողությունները, որոնք նախաձեռնվել են խնդիրներ լուծելիս, ինչպես նաև արդյունքներն ու համապատասխան դասերը:
- Լուսաբանում են օգտագործված մեթոդները, ներառյալ դրանց կիրառման հաջողված օրինակներն ու անհաջողությունները:
- Ընտրվում են ԳՋՀ ցանցի մասնագետների քննադատական վերլուծության արդյունքում, ինչի պատճառով էլ կենտրոնանում են ՋՌՀԿ-ին և դրան հասնելու ուղիներին:

Tool Box-ում ընդգրկված գործիքները առկա հնարավորությունների մի մեծ շարք են (բայց դրանք որոշակի չեն և, իհարկե, որոշակիորեն հաստատված չեն): Գործիքների տիպերը, որոնք կարող են օգտագործվել, և դրանց համակցման ճանապարհները կարող են տարբեր լինել վայրից վայր, հասարակությունից հասարակություն:

Tool Box-ը գործիքները խմբավորում է ըստ երեք ուղղության. (1) գործիքներ, որոնք ստեղծում են «անհրաժեշտ պայմաններ» և այլ գործիքների հիմք են՝ օրենքներ, ներդրումներ և քաղաքականություններ, (2) համապատասխան կառուցվածքների ստեղծում և դրանց հզորությունների զարգացում, (3) կառավարման գործիքներ, որոնցից ամեն մեկը կարող է օգտագործվել ՋՌՀԿ գործընթացում:

Tool Box-ը շարժուն ռեսուրս է, և օգտագործողները կարող են մասնակցել դրա կատարելագործմանը՝ մեկնաբանելով գործիքներն ու եղած օրինակները, ինչպես նաև ավելացնելով նորերը:

Կառուցվածքային բարեփոխումը պետք է իրականացվի մասնակցության և խորհրդակցելու միջոցով, որը ընդգրկում է պաշտոնական և ոչ պաշտոնական ոլորտներ՝ բարեփոխման գործընթացի էությունը հասկանալու և այն ղեկավարելու համար:

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Լրացում 1: Հոդված 26. ԿԶՀԳ իրագործման պլանից

Յոհաննեսբուրգ, Սեպտեմբեր 2002թ.

Մինչև 2005թ.-ը մշակել ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման և ջրօգտագործման արդյունավետության բարձրացման պլաններ՝ աջակցելով զարգացող երկրներին գործընթացի բոլոր փուլերում.

(ա) Մշակել և իրականացնել գետավազանները, ջրբաժանները և ստորերկրյա ջրերը համապարփակ կառավարելու և կորուստները նվազեցնելու ու ջրային ռեսուրսները կրկնակի օգտագործելու ջրատնտեսական ենթակառուցվածքների արդյունավետության բարձրացման միջոցառումներ ներդնելու ազգային/տարածքային ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր:

(բ) Օգտագործել քաղաքական բոլոր միջոցները, ներառյալ կարգավորումը, մոնիթորինգը, կամավոր միջոցառումները, շուկայական և տեղեկատվական գործիքները, հողային ռեսուրսների կառավարումը և ջրային ծառայությունների ծախսածածկումը՝ չսահմանափակելով չքավորների՝ մաքուր ջրից օգտվելու հնարավորությունը, և ավազաններում ներդնել ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման մոտեցումը:

(գ) Բարձրացնել ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և օժանդակել մրցակցող ջրօգտագործողների միջև ջրի բաշխմանը՝ առաջնայնություն տալով մարդկանց հիմնական կարիքների բավարարմանը, էկոհամակարգի (հատկապես խոցելի) և դրանց ֆունկցիաների վերականգնման և պահպանման պահանջների ու կենցաղային, արդյունաբերական և գյուղատնտեսական պահանջների (ներառյալ խմելու ջրի որակի պահպանությունը) հավասարակշռմանը:

(դ) Ծրագրեր մշակել՝ ջրային ռեսուրսներին առնչվող արտակարգ իրավիճակներից վնասները կրճատելու ուղղությամբ:

(ե) Օժանդակել կարողություններ ստեղծելուն ու ջրային ռեսուրսների ոչ ավանդական աղբյուրներ օգտագործելու տեխնոլոգիաներ, ինչպես նաև անբավարար ջրային ռեսուրսներ ունեցող, երաշտի և անապատացման վտանգի ենթակա երկրներում և տարածաշրջաններում ջուր խնայող տեխնոլոգիաներ տարածելուն՝ տեխնիկական և ֆինանսական աջակցման միջոցով:

(զ) Անհրաժեշտության դեպքում աջակցել ծովի ջուրը պիտանելի դարձնելու, ջրային ռեսուրսների կրկնակի օգտագործման և զարգացող երկրներում ափամերձ մառախուղների ջրի օգտագործման համար էժան, քիչ էներգատար ու կայուն ծրագրերին ու ջանքերին՝ տեխնոլոգիական, տեխնիկական և ֆինանսական օժանդակության միջոցով:

(է) Նպաստել պետական, մասնավոր կառույցների և այլ համագործակցություններին, որոնք, համաձայն կառավարության առաջարկած ազգային կայուն և թափանցիկ շրջանակի, որպես առաջնային խնդիրներ անդրադառնում են չքավորների կարիքներին: Միաժամանակ գնահատելով տեղական պայմանները՝ խթանել շահագրգիռ կողմերի մասնակցությունը պետական կազմակերպությունների ու մասնավոր ընկերությունների՝ պատասխանատվությունների բարձրացման և գործունեության մոնիթորինգի գործընթացին:

Լրացում 2: Ռազմավարական արդյունքների շրջանակի օրինակ

Շրջանակն այժմ օգտագործվում է աֆրիկյան հինգ երկրներում ՋՌՀԿ պլաններ ստեղծելու համար. այն ստեղծել է Աֆրիկայի ջրային ռեսուրսների զարգացման համագործակցությունը (ԱՋՌՋՀ):

Առաջադրանք: Աջակցել ազգային և տարածաշրջանային մակարդակով ջրային ռեսուրսների համապարփակ կառավարմանը (ՋՌՀԿ)՝ ՋՌՀԿ շրջանակի պլանավորմանն ու իրականացմանը ուղղված գործունեությամբ, ջրային հարցերը ներառելով չքավորության հաղթահարման ռազմավարության մեջ և Աֆրիկայի ընտրված երկրների ու տարածաշրջանների միջև գործընկերությունն ամրապնդելով:

Նպատակ: Աֆրիկյան երկրներին ջրային ռեսուրսների կայուն կառավարման գործում օգնություն՝ որպես չքավորությունը հաղթահարելու, բարեկեցության և պաշտպանվածության մարկարդակը բարձրացնելու ներդրում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
Ա) Ազգային ՋՌՀԿ շրջանակների զարգացման աջակցում Ընթացքին առնչվող գործողություններ 1. Երկրները ստեղծում են ծրագրի կառավարման համակարգեր և իրականացնում ՋՌՀԿ սկզբունքները լուսաբանող ծրագրեր: 2. Ծրագրերի ղեկավարությունը ապահովում է ՋՌՀԿ-ին անցնելու քաղաքական կամք և պարտավորությունների ստանձում: 3. Հիմնական շահագրգիռ խմբերը մասնակցում են երկրի ջրային համագործակցությանը և իրենց հետաքրքրվածությունն են արտահայտում ընդհանուր ծրագրի կառավարման և ՋՌՀԿ պլանի որոշիչ փուլերում կազմակերպվող և իրականացվող ազգային խորհրդակցությունների համակարգի նկատմամբ: Բովանդակությանն առնչվող գործողություններ 4. Պլանավորման ընթացքին օժանդակելու նպատակով կարողությունների ստեղծում, որպեսզի ՋՌՀԿ-ն դառնա ընկալելի, ինչպես նաև ռազմավարությունների և տարբերակների առաջարկում՝ ջրային ռեսուրսների լավագույն կառավարում ու իրագործում նախապատրաստելու համար: 5. Ջրային ռեսուրսների կառավարման, ջրօգտագործման արդյունավետությունը բարձրացնելու, չքավորությունը հաղթահարելու նախորդ և ընթացիկ գործունեությունների ու փորձի վերլուծություն, ինչպես նաև այդ տեղեկատվության վերլուծություն և օգտագործում՝ ազգային և միջազգային ջանքերն ուղղելու ՋՌՀԿ պլանների ստեղծմանն ու իրականացմանը: 6. Որոշակիացնել, գնահատել և ըստ առաջնայնության դասակարգել ՋՌՀԿ խնդիրները ամեն մի երկրում և բոլոր փուլերում:	Ընթացքին առնչվող հետևանքներ 1. ՋՌՀԿ -ի մասին ընդլայնված տեղեկություններ: 2. Վերափոխման գործընթաց սկսելու քաղաքական կամքի ու աջակցության առկայություն: 3. Շահագրգիռ կողմերի մասնակցության լայն շրջանակի առկայություն: Բովանդակությանն առնչվող հետևանքներ 4. Բարեփոխումներ իրականացնելու, հզորություններ ստեղծելու գործընթացի սկիզբ: 5. Անցյալ և ընթացիկ գործունեությունների մասին տեղեկությունները հավաքված են և կարող են օգտագործվել գործընթացի համար (տվյալների կառավարում): 6. Շահագրգիռ կողմերի հետ համատեղ ճշտված են ջրային ռեսուրսների կառավարմանն առնչվող բացթողումներն ու խնդիրները: 7. Շահագրգիռ կողմերի հետ համատեղ ճշտված ջրային ռեսուրսներին առնչվող գործառույթներ ու աշխատանքներ՝ ուղղված առաջնահերթ խնդիրների լուծմանն ու կայուն կառավարմանը: 8. Շահագրգիռ կողմերի հետ համատեղ նախապատրաստված ՋՌՀԿ-ին անցնելու գործողությունների պլան ու ռազմավարություն: 9. Քաղաքական բոլոր մակարդակներում ընդունված ՋՌՀԿ-ին անցնելու գործողությունների պլան ու ռազմավարություն: 10. Բարեփոխումների գործընթացի ֆինանսավորման մանրամասն ծրագիր և ռազմավարություն:	• Առանձին երկրներում ջրային ռեսուրսները կայուն կառավարելու և ծառայություններ մատուցելու համար ստեղծված և կամ վերափոխված ազգային շրջանակների առկայություն: • Ազգային շրջանակները բոլոր շահագրգիռ կողմերի կողմից ընդունված են որպես սեփականություն և զարգացող գործընթաց: • Ջրային ռեսուրսների բարեկարգված կառավարում և ջրամատակարարման ծառայություններ: • Նախապատրաստվող ծրագրերին օժանդակելու համար պատշաճ ֆինանսական կառույցների հետ սերտ համագործակցություն:	• Ջրային ռեսուրսների կայուն կառավարումը աջակցում է ընտրված աֆրիկյան երկրներում սոցիալական արդարության, տնտեսական արդյունավետության և շրջակա միջավայրի կայունության հասնելու գործընթացներին:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
7. Մշակել ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարություններ, գործողություններ ու կառավարման շրջանակներ՝ շահագրգիռ կողմերի խորհրդակցության ժամանակ ջրային ռեսուրսների կառավարման խնդիրները լուծելու համար՝ հաշվի առնելով առկա կառավարման համակարգերի ներուժը և սահմանափակումները: 8. Կառավարության կողմից մշակված ՋՌՀԿ պլանի տարբերակ՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Իրականացմանն առնչվող գործողություններ 9. Համապատասխան նախարարությունների և շահագրգիռ կողմերի հետ համատեղ ՋՌՀԿ պլանի ներկայացում և քննարկում՝ հետագայում քաղաքական բարձր մակարդակներում հաստատմամբ: 10. Ազգային աղբյուրներից և միջազգային ներդրողներից ֆինանսավորում ապահովող ծրագրի մշակում և իրականացնող կառույցների ստեղծում:			
Բ) Ջրային համագործությունների կառուցվածքային զարգացման աջակցում 11. Հիմնական ոլորտներում բազմաբնագավառային հիմքով համագործակցության կառույցի ստեղծում (ինչպես հասարակության մասնակցություն, անհամաձայնությունների լուծում, ֆինանսների հայթայթում, պլանավորում ու կառավարում) և այդ կառույցի գործունեության աջակցություն՝ սահմանափակ անձնակազմի վարձատրություն և ընթացիկ ծախսեր:	11. Գործընկերների ընդլայնված հնարավորություններ և կարողություններ:	• Ընտրված երկրներում ամրապնդված ազգային և տարածաշրջանային համագործակցությունը՝ որպես տարբեր ոլորտների շահագրգիռ կողմերի արդյունավետ գործելու երաշխիքների հենք:	• Լավ նախապատրաստված տարբեր ոլորտների շահագրգիռ կողմերի մասնակցությամբ մոտեցումը իր լուման ունի ջրի արդյունավետ կառավարման գործում:
Գ) ԱՀՌՇ-ում ջրի ընդգրկման աջակցում 11. Փաստաթղթի նախապատրաստում, որը կնկարագրի, թե ինչպես է ջրային ռեսուրսների կայուն կառավարումն առնչվում տնտեսական զարգացմանն ու չքավորության նվազեցմանը: 12. Բոլոր շահագրգիռ կողմերի՝ հատկապես ջրային խնդիրներով զբաղվող և ԱՀՌՇ իրականացման համար պատասխանատու նախարարությունների համար ուսուցման կազմակերպում:	12. ՋՌՀԿ-ն ԱՀՌՇ-ում ընդգրկելու մշակված ուղեցույց (պահանջվող լեզուներով): 13. Շահագրգիռ կողմերի և նախարարությունների կարողություններ՝ ներգործելու ԱՀՌՇ գործընթացի վրա:	• Աֆրիկյան երկրների ԱՀՌՇ-ում ներառված ջրային ռեսուրսներին առնչվող խնդիրներ:	

Լրացում 3: Աջակցող գործակալությունների ցուցակ

Աֆրիկյան զարգացման բանկ (ԱՖԶԲ)
ԱՖԶԲ-ն որդեգրել է ՁՌՀԿ մեթոդներ ներդնող պարտատերերին աջակցելու քաղաքականություն: Այդ քաղաքականության նպատակը ջրային ոլորտում բանկի ազդեցությունը ռացիոնալացնելը և հզորացնելն է:
http://www.afdb.org/

Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)
ԱԶԲ-ն բազմակողմանի զարգացման ֆինանսական մի կառույց է, որի ջանքերն ուղղված են Ասիայի և խաղաղ-օվկիանոսյան երկրների զարգացմանն ու չքավորության նվազեցմանը: Հիմնված լինելով 1966թ.-ին՝ այն այժմ տնօրինում են 63 անդամներ, որոնց մեծ մասն այդ տարածաշրջանից է:
http://www.adb.org/default.asp

Կանադական միջազգային զարգացման գործակալություն (CIDA)
ԿՄԶԳ-ն ակտիվ հետաքրքրվում է ՁՌՀԿ պլաններով և Գլոբալ ջրային համագործակցության միջոցով (ԳՁՀ) 10մլն ԱՄՆ դոլար է ներդրել՝ աջակցելու ազգային ՁՌՀԿ շրջանակների նախապատրաստմանը և աֆրիկյան երկրներում ջրային ռեսուրսներին առնչվող խնդիրները ԱՀՌՕ-ի մեջ ընդգրկելուն, ինչպես նաև Աֆրիկայում ազգային և տարածաշրջանային մակարդակներով առկա և նոր ստեղծվող ԳՁՀ-երի կառուցվածքային զարգացմանը:
http://www.acdi-cida.gc.ca/index.htm

Դանիական միջազգային զարգացման գործակալություն (DANIDA)
Դանիական այս գործակալության համար զարգացող երկրներում չքավորության նվազեցման խնդիրը առաջնային է: Գործակալության համար զարգացումն օժանդակելու հիմք են մի շարք փոխկապակցված թեմաներ. զարգացման գործընթացին կանանց մասնակցություն, շրջակա միջավայր, ժողովրդավարական գործընթացների աջակցում և մարդու իրավունքների պաշտպանություն: Այս փոխկապակցված թեմաները ամբողջապես զետեղված են DANIDA-ի գործունեության ծրագրում:
http://www.um.dk/eglish/

Միջազգային զարգացման գերատեսչություն (DFID)
Մեծ Բրիտանիայի կառավարության այս գերատեսչության առաջնային նպատակը համընդհանուր մասշտաբով չքավորությունը նվազեցնելը և կայուն զարգացմանն աջակցելն է, որոնց կարելի է հասնել՝ մասնավորապես Հազարամյակի զարգացման նպատակները (ՀԶՆ) որդեգրելով: DFID-ի աջակցությունն ուղղված է հատկապես մերձսահարական Աֆրիկայի և Ասիայի ամենաաղքատ երկրներին: Այն նաև իր աջակցությունն է ցուցաբերում միջին եկամուտ ունեցող երկրներում (ներառյալ Լատինական Ամերիկան և Արևելյան Եվրոպան) չքավորության նվազեցմանը և կայուն զարգացմանը:
www.dfid.gov.uc

Գերմանական տեխնիկական զարգացման կորպորացիա (GTZ)
Գերմանական զարգացման կորպորացիան՝ GTZ-ն, համաշխարհային մասշտաբով աշխատում է կայուն զարգացման խնդիրների ուղղությամբ: Նրա նպատակը զարգացող և տնտեսապես բարեփոխվող երկրների ժողովուրդների կյանքի պայմանները և հեռանկարը բարելավելն է:
www.gtz.de

Զարգացման ճանապարհ (The Development Gateway)

«Զարգացման ճանապարհ» կազմակերպությունը ստեղծում է համագործակցություններ և տեղեկատվական համակարգեր, որոնք երկիներին զարգանալու փորձ են տրամադրում: Կազմակերպությունն ունի ջրային ոլորտի լայն շրջանակ, որը անդրադառնում է հատկապես ջրային ռեսուրսների համապարփակ կառավարմանը:
http://www.developmentgateway.org/n/ode/130676/

Եվրոպական միություն (ԵՄ)
ԵՄ-ի վերջնական նպատակը երրորդ աշխարհի երկրների չքավոր մարդկանց՝ երկրի զարգացման ընթացքը վերա-

հսկելուն աջակցելն է: Սա նշանակում է անդրադառնալ խոցելիության աղբյուրներին՝ ներառյալ սննդամթերքից և մաքուր ջրից օգտվելու սահմանափակումները կամ կրթության, առողջապահական ծառայությունների, հողային ռեսուրսների հասանելիությունը, ինչպես նաև զբաղվածությունը, սոցիալական ծառայությունները, ենթակառուցվածքները և առողջ շրջակա միջավայրը:
Նաև նշանակում է պայքար հիվանդություններից և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ից խուսափելու նպատակով էժան և ցածրորակ դեղամիջոցներից օգտվելու դեմ, ինչպես նաև պարտատիրական բեռը նվազեցնելու համար: Չքավոր երկրներին աջակցելու գումարների մոտ կեսը ստացվում է Եվրամիությունից (և անդամակից երկրներից)՝ նրան դարձնելով ՁԻԱՀ-ի դեմ պայքարող ամենահզոր դոնորից մեկը:
http://europe.eu.itn/

Ֆինլանդիայի արտաքին ցորերի նախարարություն/ Զարգացման համագործակցություն
Ֆինլանդիայի որդեգրած զարագացող երկրներին առնչվող քաղաքականության համաձայն՝ զարգացման համագործակցության նպատակներն են՝ համընդհանուր անվտանգության, մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը, տնտեսական երկխոսություններին, տարածված չքավորությունը նվազեցնելը և գլոբալ էկոլոգիական խնդիրները կանխելն ու տնտեսական երկխոսության աջակցելը:
http://global.finland.fi/

Ֆորդի ֆոնդ

Ֆորդի ֆոնդի առաքելությունը ժողովրդավարական արժեքները հզորացնելն է, չքավորությունը և անարդարությունը նվազեցնելը, միջազգային համագործակցությանն աջակցելը և մարդկային ձեռքբերումները խթանելը:
www.fordfound.org

Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
Գլոբալ էկոլոգիական ֆոնդը (ԳԷՖ) հիմնվել է 1991 թ.-ին և աջակցում է զարգացող երկրների՝ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված նախագծերին և ծրագրերին: ԳԷՖ-ի դրամական միջոցները նպաստում են կենսաբազմազանության պահպանման, կլիմայական փոփոխությունների, միջազգային ջրային ռեսուրսների, հողային ռեսուրսների դեգրադացիայի դեմ պայքարի, օզոնային շերտը պահպանելու և օրգանական աղտոտվածությունը կանխելու ծրագրերին ու աշխատանքներին:
http://www.gefweb.org/

Միջամերիկյան զարգացման բանկ (IADB)
Միջամերիկյան զարգացման բանկի ինտերնետային կայքը տարբեր ուղղություններով տարածում է օգտակար հրատարակությունների շարք՝ լավագույն տեխնոլոգիաների, ռազմավարությունների ու քաղաքականությունների, ինչպես նաև տեխնիկական ուսումնասիրությունների ու կոնֆերանսների վերաբերյալ:
http://www.iadb.org/sds/ENV/publication_188_e.htm

Միջազգային ջրային ակադեմիա. Նորվեգիա
Ակադեմիայի մոտեցումը ողջ մարդկության շահույթի համար ջրային ռեսուրսների կառավարմանն ու օգտագործմանը օժանդակող մասնագետներ գտնելն է: Երկխոսությունների և կայուն ջրամատակարարման ու կեղտաջրերի մաքրման ոլորտում ուսումնասիրություններ կատարելու հնարավորություն ընձեռելու նպատակով 2003թ.-ի նոյեմբերին ակադեմիան կազմակերպել է «Ջուրը ամենաչքավորների համար» թեմայով միջազգային կոնֆերանս:
http:// www.thewateracademy.org/

Ճապոնական միջազգային համագործակցության կազմակերպություն (JICA)
JICA-ի նպատակը գիտելիքների և փորձի փոխանակման միջոցով միջազգային մասշտաբով համագործակցություններ ստեղծելն է, և այն կշարունակի աշխատել՝ ավելի խաղաղ և բարգավաճ աշխարհ ստեղծելու նպատակով:
http://www.jica.go.jp/english

Նիդերլանդների զարգացման համագործակցություն
Նիդերլանդները ցանկանում է չքավորության դեմ տևական պայքար մղել: Սա է զարգացման համագործակցության հիմնական նպատակը: Միացյալ ազգերի

որդեգրած Հազարամյակի զարգացման նպատակների շրջանակներում առաջադրված մոտեցումները, որոնց միջազգային հասարակությունը ցանկանում է հասնել մինչև 2015թ., հոլանդական զարգացման քաղաքականության հիմքերից են:
http://www.minbuza.nl/

Զարգացման համագործակցության նորվեգական գործակալություն (NORAD)
Նորվեգական զարգացման գործակալության հիմնական նպատակը բարեկարգ տնտեսական, սոցիալական և քաղաքական այնպիսի պայմանների անցնելն է, որոնցում ապրում է զարգացող երկրների բնակչությունը, ինչպես նաև ամենաչքավոր խավին աջակցություն ցուցաբերելու շեշտադրումը:
http://www.norad.no/default.asp?V_DOC_ID=244

Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալություն (SIDA)
SIDA-ն Շվեդիայի արտաքին գործերի նախարարությանը հաշվետու կառավարական կազմակերպություն է: SIDA-ի աշխատանքը չքավոր մարդկանց ապրելակերպը բարելավելն է ու չքավորության դեմ երկարաժամկետ պայքարը: SIDA-ն պատասխանատու է նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հետ համագործակցության համար:
http://www.sida.se/Sida/jps/polopoly.jsp?d=107

Շվեյցարական զարգացման համագործակցության գործակալություն (SDA)
SDA-ի մշակած «Ջրային ռազմավարություն – 2004թ.»-ը աջակցում և խթանում է ՋՌՀԿ մոտեցումներով ջրի շրջանառության խնդրի վերաբերյալ համընդհանուր տեսակետը՝ ընդունելով, որ ջրային ռեսուրսների և առողջության, հիգիենայի պահպանման, սնվելու և արտադրողականության փոխկապակցվածությունը, ինչպես նաև համապարփակ մոտեցումը մեր՝ ջրային ռեսուրսների նկատմամբ հարաբերություններում պարտադիր են:
http://www.sdc.admin.ch/mainportal.

Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն (USAID)
USAID-ին աջակցում է տնտեսական աճին, գյուղատնտեսությանը և առևտրին, համընդհանուր առողջության պահպանմանը, ժողովրդավարությանը, անհամաձայնությունները հարթելուն և հումանիտար աջակցությանը: Առաջնային խնդիրներ են նաև համաշխարհային ջրային ռեսուրսների էկոլոգիապես կայուն զարգացումը և պահպանումը:
www.usaid.gov

Համաշխարհային բանկ
Համաշխարհային բանկի անձնակազմի առաքելությունը չքավորության դեմ պայքարելն ու զարգացող երկրներում մարդկանց կենցաղային պայմանները բարեկարգելն է: Սա զարգացման բանկ է, որը ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներին չքավորությունը նվազեցնելու նպատակով տրամադրում է վարկեր, քաղաքական խորհուրդներ, տեխնիկական օժանդակություն և փորձի փոխանակման ծառայություններ:
http://www.worldbank.org/

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախ և առաջ ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Նորվեգիայի կառավարության արտաքին գործերի նախարարությանը այս ձեռնարկը պատրաստելու համար տրամադրած ֆինանսական աջակցության համար: Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել նաև հարյուրավոր մարդկանց ամբողջ աշխարհում, ովքեր աջակցեցին այս գիրք ստեղծելու գործընթացին՝ ներառյալ ԳՋՀ-ի՝ 2004թ.-ի փետրվարին Ստոքհոլմում կազմակերպած աֆրիկյան երկրների ռազմավարական զարգացման վերաբերյալ և 2004թ.-ի հուլիսին Կուալա-Լումպուրում կայացած սեմինարների՝ էլեկտրոնային փոստով խորհրդակցող մասնակիցներին (ավելի քան 100 հետաքրքրված մասնակից ամբողջ աշխարհից), ինչպես նաև Միջամերիկյան զարգացման բանկի և տնտեսական կոմիտեի՝ Լատինական Ամերիկայի երկրների վերաբերյալ 2004թ.-ի հուլիսին Բուենոս Այրեսում կազմակերպած սեմինարի մասնակիցներին: Այս քննարկումների արդյունքում ստացված առաջարկություններն ու օգտակար տեսակետները մեծ դեր ունեցան փաստաթղթի վերջնական տարբերակի ստեղծման գործում, որը կազմեց Սառա Քարիջերը ԳՋՀ տեխնիկական կոմիտեի հովանավորությամբ:

Մարդկանց այդ հոծ բազմությունը, որն ուղղակի կամ անուղղակի մասնակցություն է ցուցաբերել այս լայնածավալ գործին, պարզապես անհնար է մեկ առ մեկ առանձնացնել: Այնուամենայնիվ, ուզում ենք շնորհակալությունն հայտնել՝

- Սառա Քարիջերին՝ ձեռնարկը պատրաստելիս ցուցաբերած համբերության և տոկունության համար. փաստաթուղթը կազմված է բազմաթիվ հոդվածներից, որոնք ունեն հաստատուն ոճ և մոտեցում:
- ԳՋՀ տեխնիկական կոմիտեի անդամներին՝ Մուհամմեդ Ամիդ - Կադիին, Հարմուտ Բրյուելին, Մալին Ֆալկենմարկին, Սիմի Կամալին, Յուդիթ Ռեեսին, Փիթեր Ռոյերին, Միգել Սոլանեսին, Ալբերտ Ռաիթին և Յանգ Խալիոլիուին՝ աշխատանքները սկզբից մինչև վերջ ղեկավարելու և մտավոր աջակցություն ցուցաբերելու համար:
- Պիեռ Բարտիլսսոնին, Մարգարեթ Քեթլի – Քառլսոնին, Ալ Դուդային, Էմիլիո Գաբրիելիին, Ալան Հոլլին, Յան Հասսինգին, Տորկիլ Ջոնս – Կլաուսենին, Հենրիկ Լարսենին և Ջակյուս Ռեյին՝ սկզբնական տարբերակները նախապատրաստելիս ակտիվ մասնակցության համար:
- Ջորջ դը Գուիջերին՝ Ստոքհոլմում կատարված աշխատանքներին միջոցներ տրամադրելու և սկզբնական տարբերակների նախապատրաստմանը մասնակցելու համար:
- Ջերրի Դելլի Պրիսկոլլիին՝ Կուալա-Լամպուրի սեմինարին օժանդակելու, էլեկտրոնային կոնֆերանսին մասնակցելու և տարբեր արժեքավոր առաջարկությունների համար:
- Կվեի Սիմին և Ասլամ Չովդրիին՝ օրինակներ ներկայացնելու համար:
- Լիաննե Բուրնեին և Կրիստի Վալկուսկիին՝ ամբողջ ընթացքի նախապատրաստմանը ցուցաբերած խմբագրական և ադմինիստրատիվ աջակցության համար:
- Նիդիի Լադիային՝ քաղվածքային նյութեր հավաքելուն օժանդակելու համար:
- Ջեյմս Լենահանին և Աննա Միլթոնին՝ կարճ ժամանակահատվածում, սուղ պայմաններում պլանի կազմման և արտադրման փուլերում ցուցաբերած տոկունություն համար:

Ռոբերտո Լենտոն
տեխնիկական կոմիտեի ներկայացուցիչ
Գլոբալ ջրային համագործակցություն